

Հայ Վերակազմ Աստուածաշնչի Եկեղեցի

Ծրագիր Կանոնագիր

Վաերացւած Յուլիս 11, 2013

Բովանդակություն

Յօդուած 1

Ընկերութեան անուն

Յօդուած 2

Նպատակ

Յօդուած 3

Հաւատոյ Հանգանակ

Յօդուած 4

Ընկերութեան Անդամակցութիւն

Յօդուած 5

Եկեղեցւոյ Անդամակցութիւն

Յօդուած 6

Պաշտօնակրեր

Յօդուած 7

Այլ Խորհրդականներ և Յանձնախմբեր

Յօդուած 8

Ընկերութեան Պաշտօնեաներ

Յօդուած 9

Զեռնադրութիւն, Արտօնագրութիւն և

Պաշտօնակոչութիւն

Յօդուած 10

Խորհուրդներ

Յօդուած 11

Անդամական Ժողովներ

Յօդուած 12

Անհամաձայնութեանց Յանգևորում

Յօդուած 13

Այլ Նախատեսութիւններ

Յօդուած 14

*Ստացումներ, Ներդրումներ,
Դրամական Տրամաբաշխութիւններ*

Յօդուած 15

*Ընկերութեան Արձանագրութիւններ
ու Տեղեկագրութիւններ*

Յօդուած 16

Լուծում

Յօդուած 17

Բարեփոխութիւններ

Յօդուած 1

Ընկերութեան Անուն

Այս Ընկերութեան անունը Հայ Վերակազմ Աստուածաշնչի Եկեղեցի է : Սա Քալիֆորնիա Նահանգի պայմաններին համապատասխան մի անշահաբեր կրօնական Ընկերութիւն է:

Յօդուած 2

Նպատակ

Այս եկեղեցւոյ նպատակն է Աստուածաշնչի Աստծուն փառաւորել, Նրան ուղղած պաշտամունքը յառաջադրել, սրբերին շինել և մեղաւորներին աւետարանել: Այս նպատակին հասնելու համար մենք նւիրած ենք Աստծուն պաշտել, բոլոր աշխարհին Աստուածաշունչը քարոզել և ուսուցանել, Աստծոյ լրիւ խորհուրդը ու յատկապէս Նրա Շնորհաց Աւետարանը յայտարարել, ու "սրբերին միանգամ աւանդւած հաւատքը" պաշտպանել (Մատթէոս 28:18-20, Յուդա 3):

Յօդուած 3

Հաւատոյ Հանգանակ

Այս Ընկերութեան Հաւատոյ Հանգանակն այն է ինչ որ ներփակւած է այս յօդուածում և այնպէս ինչպէս որ Քալիֆորնիա Նահանգի Նահանգային Դպրատան Գրասենեակում էգրանցւել: Այս Ընկերութեան Հաւատոյ Հանգանակը հետևեալն է՝

1. Աստուածաշունչը (Հին և Նոր Կտակարանների 66 գրքերը) գրի առնւած Աստծոյ խօսքն է: Աստուածաշունչը Աստծոյ ճշմարտութեան յայտնաբերումն է ու Սուրբ Հոգուց ներշնչւած է, անխափան ու անսխալ է, և հաւատքի ու արարքի բոլոր մարզերում միմիայն հեղինակութիւնն է ու խղճի միմիայն պարտադրողն է:
2. Գոյութիւն ունի միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած՝ անձնագոյ, յաւիտենական, անհուն, ամենագէտ Հոգի, սուրբ, և փառաւոր, անփոփոխ Իր էութեամբ ու կատարելութեամբ, ամէն բաների Արարիչ, և տիեզերքի Գերիշխանը:
3. Աստուած մէկ է էութեամբ, յաւիտենապէս գոյ երեք Անձերով (Սուրբ Երրորդութիւն)՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի, համահաւասար, համէակ, և համայաւետ, հաւասարապէս պաշտամունքի ու հնազանդութեան արժանի:
4. Հայր Աստուած, Երրորդութեան առաջին անձը, գերիշխան է ստեղծագործութեան, նախախնամքի ու փրկանաւորութեան մէջ: Նա հրովարտակել է ամէն բաները որ տեղի են ունենում Իր փառքի համար, և շարունակաբար պահում ու կառավարում է բոլոր արարածներին

և եղելով թիւններին: Նա ողորմութեամբ է վարուում մարդկանց հարցերով, Նա աղօթք է լսում ու պատասխանում, և Նա մեղքից ու մահից փրկում է բոլոր նրանց որոնք Յիսուս Քրիստոսի միջոցով գալիս են Նրան:

5. Յիսուս Քրիստոս, Երրորդութեան երկրորդ անձը, Աստծոյ Որդին է, Աստծուց եղած, և Իր մարդեղութեամբ Սուրբ Հոգուց յղացւած և կոյս Մարիամին ծնւած:
6. Սուրբ Հոգին, Երրորդութեան երրորդ անձը, փաստայայտում է աշխարհին մեղքի, ուղղարարութեան և արդարութեան համար: Նա հաւատացեալի կեանքն է ու զօրացնում է Աւետարանի քարոզչութիւնը և ուսուցմունքը:
7. Մարդը ստեղծել է Աստծոյ պատկերով: Նա մեղանչեց, ու Անկումով պղծեց, և օտարացած Աստծուց հոգևոր և մարմնաւոր մահ կրեց: Սրա հետևանքով, մարդ արարածներ մեղաւոր բնութեամբ, հոգևորապէս մեռած, Աստծոյ դէմ թշնամացած, և Նրա դատապարտութեան ու բարկութեան տակ են ծնւում:
8. Մեղաւորներ լիովին անկարող են իրենք իրենց դէպի Աստծուն ուղղաթեքել, կամ իրենք իրենց փրկել, կամ առանց նախ Սուրբ Հոգու գերիշխան վերստին ծննդեան արարքին հաւատք գործադրել:
9. Ի յաւիտենից Աստուած որոշեց փրկարար շնորհք գործադրել Իր կամքի հաճութեան համեմատ և ոչ որևէ մարդկային արարքի, արժանաւորութեան, կամ նախատեսւած հաւատքի համեմատ: Աստծոյ ընտրութիւնը հիմնւած է միմիայն Իր գերիշխան շնորհքի վրայ ու ոչ թէ մարդկանց որևէ մի արարքի վրայ:
10. Յիսուս Քրիստոս Իր մարդեղութեամբ մի մարդկային բնութիւն ստացաւ, կատարելապէս միացած Իր աստուածային բնութեան հետ, լինելով կատարեալ Աստուած և կատարեալ մարդ: Իր կատարեալ կեանքով և զոհաբեր մահով, Նա Աստծոյ օրէնքի ուղղարար պահանջին հնազանդեց, խաչի վրայ շարշարեց ու մեռաւ, մեղքի պատիժը (Հօր բարկութիւնը) Իր վրայ առնելով ու ճշմարիտ և պատշաճ քաւութիւն կատարելով:
11. Տէր Յիսուս Քրիստոս մարմնապէս մեռելներից յարեաւ, երկինք համբարձաւ, և նստում է Հօր աջին, ապրում է յաւիտեան բարեխօսելու Իր ժողովրդի համար:
12. Քրիստոնեայի երջանիկ յոյսը Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի անձնական և մօտալուտ փառքով վերադարձն է որով Նա պիտի դատի կենդանի ապրողներին ու մեռելներին:
13. Նրանց որոնք Սուրբ Հոգին վերակենդանացնում է վերստին են ծնւում, որոնք դարձի կգան իրենց մեղքերից և կը հաւատան Տէր Յիսուս Քրիստոսին ու կփրկեն և այդպէս Աստծոյ զաւակներ ու յաւիտենական կեանքի ժառանգներ կգառնան:
14. Բոլոր նրանք որոնք հաւատան Սուրբ Հոգու ներբնակութիւնն ու կնիքն են ներառնում, ու պահպանւած են Աստծոյ խոստման ու զօրութեան համեմատ, և իրենց փրկութիւնը չեն կորցնել:

15. Տրեզերական եկեղեցին մի կենդանի հոգևոր մարմին է որի գլուխը Քրիստոս է և բոլոր վերանորոգված անհատներն անդամներ են: Եկեղեցույ առաքելութիւնը Աստծուն պաշտել, Աստծոյ խօսքը քարոզել, հաւատացեալիներին շինել, նրանց ծառայութեան համար գօտեպնդել, և Յիսուս Քրիստոսի Աւետարանը կորսւած աշխարհին տարածել է:
 16. Մեր կեանքի բոլոր մարգերում ապրելու ենք Աստծոյ փառքի համար ու Յիսուս Քրիստոսի առաջնորդութեան ներքև:
 17. Մկրտութեան ու Տիրունական Ընթրիքի (Հաղորդութեան) խորհուրդները իր եկեղեցույ համար Տէր Յիսուսից կարգւած արարողութիւններ են: Այս երկու խորհուրդները մինչև Տէր Յիսուս Քրիստոսի վերադարձը պէտք է պահեն և կատարեն:
 18. Անվերածինները կը դատուեն և կը դատապարտուեն դժոխքի յաւիտենական գիտակցաւոր տանջանքին որն է կրակի լիճը:
 19. Յաւելաբար, մենք հաստատում ենք "Առաքելոց Հանգանակը", "Նիկիեան Հանգանակը", և Բողոքական Վերակազմութեան Հինգ "Միայններ"ը:
- Այս հաւատոյ հանգանակը Աստուածաշնչային վարդապետութեան մի համառօտ դաւանագրութիւն է: Սա երբևիցէ չի փոխարիում, ոչ էլ հաւասարում Աստծոյ խօսքի անխափան հեղինակութեան հետ:

Յօդուած 4

Ընկերութեան Անդամութիւն

Բաժին 1. Ընկերութեան Անդամներ

Ընկերութիւնը անդամներ չունի: Անդամների մեծամասնութեան քւէին կարիք ունեցող որևէ արարք, միմիայն պէտք է վաւերացւի Հովական Ժողովից: Բոլոր իրաւունքները որոնք պիտի տրւէին անդամներին տրւած է Հովական Վարչախմբին:

Բաժին 2. Հաղորդակցութեան Անդամների

Ոչ մի բան ներփակւած Բաժին 1 ի մէջ կարող է Ընկերութեան սահմանափակել իր իրաւունքներից ակնարկելով Ընկերութեան հետ կապակիցներին որպէս "Անդամներ", նոյնիսկ երբ այսպիսի անհատներ ընկերութեան անդամներ չեն, և ոչ մի այսպիսի ակնարկութիւն ներփակ այս Կանոնագրին կամ դրանից դուրս կարող է կայացնել որևէ մէկին որպէս անդամ ըստ Քալիֆորնիա Նահանգի Անշահաբեր Ընկերութեան Օրէնքի 5056 բաժնին: Ընկերութիւնը կարող է աւելացնելով իր Կանոնագրի յօդւածների մի մասին կամ բոլոր մասերին Քալիֆորնիա Նահանգի Անշահաբեր Ընկերութեան Օրէնքի համապատասխան անդամութեան իրաւասութիւն տալ որևէ անհատի կամ անհատների որոնք Ընկերութեան պաշտօնեաների ընտրութեան, ունեցւածքի և բոլոր կալւածքի, կամ ուրիշ ընկերութեան հետ միանալու, կամ Ընկերութեան Կանոնագրի ու յօդւածների

փոփոխութեան համար քւէարկութեան իրաւունքը շունեն, բայց ոչ մի այսպիսի անհատ չի կարող նշած բաժին 5056ի անդամ դառնալ:

Յօդւած 5

Եկեղեցւոյ Անդամակցութիւն

Բաժին 1. Հաղորդակցութեան Նպատակ

Քրիստոնեայ հաւատացեալների ժողովքը որը դիմել է անդամակցութեան համար և որոնց դիմումը պաշտօնապէս ընդունուել է, մի հոգևոր մարմին են կազմում, միացած հոգևոր նպատակների համար ըստ նշած Ընկերութեան Յօդւածագրի Յօդւած 2 ի ու այս Կանոնագրի Յօդւած 2 ի համաձայն:

Բաժին 2. Իզօրու Անդամակցութիւն

Որևէ անհատ որը Աստծոյ հանդէպ դարձ և մեր Տէր Յիսուս Քրիստոսի հանդէպ հաւատք է դաւանում, և այս իր դաւանանքի հիման վրայ մկրտուած է, և համաձայն է այս եկեղեցւոյ նպատակների, եկեղեցավարական վարչաձևի, և վարդապետութեան մեծամասնութեան հետ (ըստ Յօդւած 3 – Հաւատոյ Հանգանակ), պայմանաւրացած է անդամակցութեան համար: Եթէ դիմողը մի ուրիշ աւետարանական եկեղեցւոյ անդամ է եղել, նախքան վերջնական ընդունելութիւնը, նրա այն եկեղեցւոյ մէջ անդամութեան վիճակից տեղեկանալու համար մի հարցաքննութեան նամակ կուղարկւի իր պատկանած եկեղեցուն:

Բաժին 3. Քւէարկութեան Առանձնաշնորհներ

Այս եկեղեցւոյ անդամակցութիւնը որևէ անդամի Ընկերութեան մէջ իւրատիրութեան իրաւունքներ չի տալիս, այլ անդամին իրաւասութիւն է տալիս անդամական ժողովների ընթացքին քւէարկութեամբ վաւերացնել այն նիւթերն որոնք Հովական Վարչախումբն է ընտրել անդամակցութեան ներկայացնելու նրանց վաւերացման համար: Այսպիսի պարագաներին, վաւերացման առանձնաշնորհը սահմանափակած է միայն այն անդամներին որոնց անդամութիւնը կայուն վիճակում է, որոնք որևէ դաստիարակչական ընթացքում չեն գտնուում, և որոնք անց են կացրել իրենց տասնութ տարեկան տարեդարձը: Անդամակցութիւնը անդամից անդամ փոխանցելի չի, ոչ էլ կարելի է յանձնել այն որևէ մի անհատական ներկայացուցիչի, ժառանգի կամ միջոցի:

Բաժին 4. Անդամակցութեան Դիմումնագիր

Եկեղեցին տարեկան անդամակցութեան դասարաններ կը կազմակերպի, 4-6 շաբաթներ տևողութեամբ, ներկայացնելով Հայ Վերակազմ Աստուածաշնչի Եկեղեցւոյ համառօտ պատմականը, և անդամներից ակնկալած պատասխանատուութիւններն ու պարտականութիւնները: Բոլոր

նրանք որոնք փափաքում են անդամակցել եկեղեցույն, պարտին նախ այս անդամակցութեան դասընթացքը լրացնել:

Որևէ անհատ լրացնելով վերոյիշեալ Բաժին 2 ի մէջ նշած պայմանը, ու անդամակցութեան դասընթացքը, իր անդամակցութեան դիմումնագիրը ներկայացնելու է Հովական Վարչախմբին:

Հովական Վարչախումբը կժամադրուի հանդիպելու դիմողի հետ որի ընթացքում հարց կտրուի նրան իր ունեցած նախնական Քրիստոնէական փորձառութեան, վարդապետական հաւատամքի, և այս տեղական եկեղեցուն օգնութեան և ձեռնտուութեան նկատմամբ նրա ունեցած նպատակների լրջութեան մասին: Հաւատոյ Հանգանակի կամ Ծրագիր Կանոնագրի նկատմամբ որևէ անհամաձայնութիւն կամ հարցումներ պէտք է ներկայացեն անդամակցութեան դիմումնագրի մէջ: Հովական Վարչութիւնը կը քննեն այս հարցումները կամ անհամաձայնութիւնները որոշելու անդամակցութեան դիմումնագրի վաւերացումը:

Բաժին 5. Անդամակցութեան Մերժում

Անդամակցութեան դիմումնագիրը վերատեսութիւնից յետոյ կամ անդամակցութեան թեկնածուի հետ տեսակցութիւն ունենալուց յետոյ, եթէ Հովական Վարչախումբը այն եզրակացութեան հասնի թէ դիմողը Յիսուս Քրիստոսին որպէս իր Փրկիչն ու Տէրը չի դաւանում, կամ աստուածապաշտ կեանքի ապացոյցի պակասը կայ, անդամակցութիւնը կը մերժուի: Հովական Վարչախմբի որոշումը վերջնական է ու ոչ մի դատարանի որևէ վերատեսութեան խնդրանք կարելի է ներկայացուի:

Բաժին 6. Դիմողների Ընդունելութիւն

Անդամակցութեան ընդունւած դիմողները, կարելութեան պայմաններում, ներկայանալու են Հովական Վարչախմբի կողմից որոշուած մի պաշտամունքի ժողովի, որի ընթացքին դիմողները հանրապէս վաւերացնելու են իրենց անդամակցութեան նւիրումը և հանրապէս ճանաչելու են անդամների կողմից:

Բոլոր նրանք որոնք վերոյիշեալ պայմանների համեմատ ընդունւում են եկեղեցույ անդամակցութեան, նկատուում են որպէս կայուն վիճակում եղող անդամներ մինչև այն ժամանակ որ Բաժին 4 ի մէջ յիշուած պայմաններից մէկը փոխուի:

Բաժին 7. Անդամների Պատասխանատուութիւններ

Անդամներ բոլոր եկեղեցույ մարմնի օգտի համար ձգտելու են իրենց հոգևոր պարգևները գործածել և հնազանդելու են Հովիւների առաջնորդութեան:

Անդամներից հետևեալ կէտերն են ակնկալուում՝

(ա) **Շնորհաց Միջոցներ** – Բոլոր հանրային և անհատական շնորհաց միջոցներ, ինչպէս եկեղեցույ Կիրակի օրուայ պաշտամունքի ժողովների և Քրիստոնէական Կրթութեան սերտողութիւնների

(չափահասների և երեխաների դասարանների) կանոնաւոր յաճախելը, առօրեայ Աստուածաշնչի ընթերցումը, և անհատական ու ընտանեկան աղօթքները յանձնարարոււմ են անդամներին:

(բ) Տան Կառավարչութիւն – Եկեղեցին ակնկալոււմ է որ իր անդամները իրենց տունը կառավարելու համար Սուրբ Գրքին հետևեն: Աստուած պահանջոււմ է որ տան մէջ աստուածապաշտութիւնը առօրեայ կեանքի ընթացքին բարձր նախապատուութիւն ունենայ: Աստուծոյ օրէնքի մէջ տունը կենդրոնական ուշադրութիւն է գրաւոււմ ու Նոր Կտակարանի յաճախակի յորդորանքների ենթակայ է: Ակնկալոււմ է որ տղամարդիկ տնօրինեն իրենց տները ազնուութեամբ բայց նաև հաստատութեամբ՝ հետևելով Քրիստոսի օրինակին (Եփեսացիս 5:25): Կանայք ամէն բանոււմ պէտք է հնազանդեն իրենց ամուսիններին, որպէս թէ Տիրոջ (Եփեսացիս 5:22): Ծնողներ պէտք է մեծացնեն իրենց զաւակներին Տիրոջ սնուցանութեամբ ու խրատմունքով (Եփեսացիս 6:4), սրբակեաց օրինակով, կրօնագիտութեամբ, շարունակական կրթութեամբ, և հաստատ դաստիարակչութեամբ (ներառեալ մարմնաւոր պատիժ): Երեխաներ պէտք է յարգանքով հնազանդեն իրենց ծնողներին (Եփեսացիս 6:1): Այս նախնական պատասխանատուութիւնները, աղօթքով գործադրելիս, հանրութեան մէջ պիտի պատւի Քրիստոսի անունը ու եկող սերնդների մէջ պիտի ամրապնդի Քրիստոսի առաքելութիւնը:

(գ) Միսիոնարութիւն և Վկայութիւն – Իւրաքանչիւր Քրիստոնեայի ու եկեղեցւոյ պարտականութիւնն է որոնել և տարածել Աւետարանը մինչև երկրի ծայրերը: Միսիոնարական աշխատանքները վերածնութեան բնական արդիւնքներն են (Մաղմոս 51:10-14): "Աւետարանը Քարոզէ՛ք" խօսքը Քրիստոսի յաճախակի կրկնած հրահանգն է: Կեանքով ու խօսքով Աստուծուն վկայելը իւրաքանչիւր Աստուծոյ զաւակի պարտականութիւնն է: Բոլոր անդամներից վասն Քրիստոսի անհատական վկայութեան աշխատանքներ են ակնկալոււմ: Սրանից դուրս մենք նւիրած ենք Աւետարանը երկրի ծայրերը ուղարկելու հասարակաց աշխատանքներին:

(դ) Տալու Սկզբունքները – Մենք նաև շեշտոււմ ենք մեր համոզումը թէ Քրիստոնեաներ տեղական եկեղեցւոյն կատարած իրենց նւիրատուութեամբ Տիրոջ գործին նե ցուկ պիտի լինեն: Համեմատակշիռ տալը Սուրբ Գրքի իւրապատուկ ու դրական մի պատուէր է (Մաղաքիա 3:8-11): Ուստի որպէս օժանդակութիւն մենք նւիրոււմ ենք մեզ կանոնաւորապէս, մեր եկամուտին համակշիռ ու ըստ Ա. Կորնթացիս 16:2 ի սկզբունքին օժանդակել այս եկեղեցուն:

(ե) Ծառայութիւն - Իւրաքանչիւր Քրիստոնեած ծնւել է Սուրբ Հոգուց և ունի Նրա ներբնակութիւնը (Գործք Առաքելոց 2:38, Հռովմայեցիս 8:9, Բ. Կորնթացիս 1:22): Աստուածաշունչը սովորեցնոււմ է որ ամէն մի հաւատացեալ պարգևած է Սուրբ Հոգուց և կարևոր դեր ունի եկեղեցւոյ մարմնոււմ (Ա. Կորնթացիս 12:11, 14-25):

Այս եկեղեցին վաւերացնոււմ է "Իւրաքանչիւր անդամի ծառայութեան" գաղափարը, կոչ ուղղելով բոլոր հաւատացեալներին որ գործունեակերպ գործածեն իրենց հոգևոր պարգևները, խօսքով կամ արարքով, Սուրբ Հոգու տւածի ու Նրանից ստացած զօրութեան համեմատ, ծառայութեան համար, գօտեպնդելով և շինելով ուրիշներին, և իրենց հաւատքի կառուցման համար (Ա. Կորնթացիս 12:7, Եփեսացիս 3:2, 4:11-13):

Նկատի առնելու է որ անդամներ որոնք ծառայում են եկեղեցույ այն ծառայութիւններից ներս որոնցմով Աստծոյ խօսքն է հաղորդում (ուսուցանութիւն, առաջնորդութիւն, խորհրդատուութիւն, փառաբանութիւն, երաժշտութիւն, և այլն) հարկ է նրանց ամբողջովին համաձայն լինել այս եկեղեցույ Հաւատոյ Հանգանակի հետ (ըստ Յօդած 3 - Հաւատոյ Հանգանակ), ինչպէս նաև համաձայն լինել եկեղեցույ նպատակների և վարչաձևի հետ: Որևէ ժամանակ մի այսպիսի անդամ եթէ վերոյիշեալ վիճակից փոխի իր կեցւածքը, այնպիսին հոգևոր ու բարոյական պարտականութիւն ունի այսպիսի փոփոխութեանց մասին տեղեկացնելու Հովուական Վարչախմբին:

(գ) Քրիստոնէական Ազատութիւն – Մենք մեր առօրեայ կեանքի վարելակերպի ու խօսելակերպի մէջ իրարուց պահանջում ենք որ Աստծոյ խօսքի մէջ հաստատւած բոլոր բարոյական կանոններին հաւատարիմ գտնուենք (Եբրայեցիս 10:24-25):

Սակայն ուր որ Աստուած իր խօսքում չի արգիլել որոշ արարքներ, Քրիստոնէան ազատութիւն ունի մասնակցելու դրանց մէջ: Հետևեալ սկզբունքները պէտք է միշտ ուղղեն Քրիստոնէայի ազատութեան գործադրութիւնը՝

- 1. Աստծոյ Երկիւղը –** Որպէս Քրիստոսի ծառայ, բոլոր արարքները պէտք է Աստծուն սիրելուց մղւած լինեն, և բոլոր բաները պիտի գործածուեն Նրա փառքի համար: Ազատութիւն բառը յաճախ գործ է ածուում որպէս շարութեան և անձնահաճոյքի ծածկոց որը մեղք է (Ա. Կորնթացիս 10:31, Ա. Տիմոթէոս 4:4-5, Ա. Պետրոս 2:15-16):
- 2. Հաւատակից Սրբերին Հանդէպ Սէր –** Թէպէտ որևէ մարդ չի կարող պարտադրել Քրիստոնէայի խղճի վրայ, սակայն հաւատակից սրբերի բարեկեցկութիւնը պէտք է խորապէս ազդի նրա որոշումների վրայ: Հաւատակից սրբերին ծառայելու հոգով, նա պէտք է անի այն ինչ որ նրա դատողութեամբ շինարար է նրանց համար ու պիտի արգիլի նրանց գայթակելուց (Գաղատացիս 5:13, Ա. Կորնթացիս 8:9, 10:23):
- 3. Մեղաւորների Հանդէպ Գթառատութիւն –** Ազատութեան գործածութիւնը միշտ պէտք է կանոնաւորի մեղաւորների վրայ թողած իր ազդեցութիւնից, որ այդ ընտրած վարելակերպով հաւանաբար շահել նրանցից ոմանց (Ա. Կորնթացիս 9:19-22):
- 4. Հոգու Վրայ Հսկողութիւն –** Թէպէտ խղճով ազատ գործածելու Աստծոյ բոլոր ստեղծագործութիւնը, սակայն մնացող ցանկութիւնների պատճառով գործնականութեան մէջ զգուշութիւն է պահանջուում: Այնտեղ ուր Քրիստոնէան իր դատողութեամբ տկար է ցանկալու, նա պէտք է հեռու մնայ որպէսզի պահպանուի (Ա. Կորնթացիս 9:23-27):

Բաժին 8. Անդամակցութեան Կանգ

(ա) Հրաժարութեամբ – Անդամներից ստացած հրաժարական նամակները կը վաւերացւեն Հովուական Վարչախմբի կողմից տւեալ եթէ այն անդամների անդամակցութիւնը կայուն վիճակում է ու նրանք հրաժարութեան դիմումի ժամանակ եկեղեցույ դաստիարակչութեան տակ չեն

գտնուում: Երբ այսպիսի նամակներ վաերացեն, եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութիւնը կանգ է առնում: Հրաժարական նամակները կտրուեն միայն ուրիշ Աւետարանական եկեղեցիներին:

(բ) Դրսառութեամբ – Եթէ մի անգամ շարունակաբար և առանց արդարացի պատճառով, կամ առանց անդամակցութեան կանգառման խնդրանքով, բացակայի եկեղեցւոյ Կիրակի պաշտամունքի ժողովներից և Քրիստոնէական Դաստիարակչական դասընթացքներից, ինչպէս նշած Բաժին 7 (ա) ի մէջ, այն անգամը Հովիւների Վարչախմբի դատողութեան համեմատ կարելի է դրսաոււի անդամակցութիւնց:

Եթէ մի անգամ որը գործունեայ է մի ծառայութեան մէջ, շարունակաբար բացակայի եկեղեցւոյ Կիրակի պաշտամունքի ժողովներից և Քրիստոնէական Դաստիարակչութեան դասընթացից, ինչպէս նշած Բաժին 7(ա) ի մէջ, Հովիւները կտեսակցեն նրա հետ և վերատեսեն նրա պարագաները: Եթէ անգամը որոշ ժամանակի համար հեռու է ու պիտի վերադառնայ, այդ պարագային այն անգամի ծառայութիւնը կարելի է Հովական Վարչախմբի յարմար նկատած չափով ժամանակի համար յետաձգւի կամ մի ուրիշ կամեցող ու ծառայութեան կարող մէկին յանձնւի:

(գ) Բանադրութեամբ – Ուղիղ և Սուրբ Գրոց համերաշխ է եկեղեցւոյ համար, որ Հովական Վարչախմբի առաջարկութեամբ, այս հաղորդակցութիւնից դրսառնել ու արձակել այն անհատին որը պնդում է հերձած վարդապետութեան ընդգրկումը, կամ որը բացայայտաբար և պնդումով իր Քրիստոնէական վկայութեան անհամերաշխ կեանք է վարում, կամ մէկը որ պետական օրէնքին ու հասարակաց բարոյականութեան խախտման մէջ է ապրում, կամ մէկը որ անկարգութեամբ է ապրում, կամ որեւէ մի անհատ որ այս եկեղեցւոյ խաղաղութիւնն ու միաբանութիւնն է խանգարում (Տես Մատթէոս 18:15ից սկսեալ, Ա. Կորնթացիս 5:1ից սկսեալ, Բ. Թեսաղոնիկեցւոց 3:6, 11-15, Հռովմայեցիս 16:17):

Բաժին 9. Եկեղեցւոյ Անդամակցութիւնից Բանադրում

Բանադրման կարգաձևը լինելու է հետևեալ ձևով: Խնդրոյ առարկայ անգամը ըստ Մատթէոս 18:15-18 ուղղութեան կը տեսակցւի: Եթէ այս հաղորդակցութեան վերականգման շառաջնորդի, գրաւոր առարկութիւնները կը ներկայացեն Հովական Վարչախմբին: Բոլոր հասանելի վկաների անաչառ և անկողմնակալ ունկընդրութիւնից և բոլոր իրականութիւնները ստուգելուց յետոյ, եթէ Հովական Վարչախմբի 2/3 (բոլորը եթէ 3 հովիւներից պակաս) համոզեն որ առարկելին յանցաւոր է, Հովական Վարչախումբը իր որոշումը կը յայտարարի մի բնականոն պաշտամունքի ընթացքին կարգաւորած ըստ իրենց ծրագրապահին:

Բաժին 10. Եկեղեցւոյ Անդամակցութեան Վերահաստատում

Եկեղեցին մի բանադրւած անգամի ետ եկեղեցւոյ անդամակցութեան վերահաստատելու լիազօր է: Անդամակցութեան վերահաստատման կարգաձևը լինելու է հետևեալ ձևով:

Անդամակցութեան վերահաստատում որոնող անհատը գրաւոր դիմում պիտի ներկայացնի Հովական Վարչախմբին և իր դրսառութեան կամ բանադրութեան պատճառներից զղջման

վերաբերեալ բաւարար ու գոհացուցիչ փաստեր պիտի տայ (Բ. Կորնթացիս 2:6-8): Այս խնդրանքը ստանալու հիման վրայ, Հովական Վարչախումբը դիմողի հետ կը պայմանաւորեն հանդիպել մի որոշ պահին ու մի տեղ, որը նա կը յաճախի ու կը հարցաքննի իր այս եկեղեցւոյ ամբողջական ծառայութեան օժանդակելու մտադրութեան լրջութեան մասին, և անդամակցութեան պայմաններին և ակնկալութիւններին հնազանդելու մասին այնպէս ինչպէս գրած է այս Ծրագիր Կանոնագրի Յօդած 5 ի մէջ:

Հովական Վարչախմբի 2/3 ի վաւերացումով (Միաձայնութեամբ եթէ 3 ից պակաս հովիւներ), անդամութեան վերահաստատում որոնողի անունը և նրա անդամութեան վերականգման առաջարկութիւնը նազագոյն երկու շաբաթներ կը տպւի եկեղեցւոյ շաբաթական լրագրի մէջ, որ եթէ ժողովրդից որեւէ մէկը այս առաջարկութեան մասին որեւէ առարկութիւն ունենայ, նա անհատաբար մօտենալով Հովիւներից որեւէ մէկին արտայայտի իր առարկութիւնը: Այս երկու շաբաթների ընթացքում եթէ ոչ մի առարկութիւն չստացւի, նախնական ծանուցման երկու շաբաթների ժամանակընթացի աւարտումից անմիջապէս յետոյ դիմողի վերահաստատումը կը յայտարարուի մի բնականոն պաշտամունքի ընթացքին:

Այն պարագային երբ ժողովրդից առարկութիւններ ստացւեն, անդամակցութեան վերահաստատման առարկող անհատը պիտի տեսակցի Հովիւների Վարչախմբի հետ ու իր առարկութիւնները ներկայացնի նրանց: Բոլոր հասանելի վկաների անաշու և անկողմնակալ ունկընդրութիւնից և բոլոր իրականութիւնները ստուգելուց յետոյ, եթէ Հովական Վարչախմբի 2/3 (բոլորը եթէ 3 հովիւներից պակաս) համոզւեն որ առարկած անհատը յանցաւոր է, Հովական Վարչախումբը ետ պիտի առնի իր առաջարկութիւնը մինչև որ առարկութիւնները յարդւեն: Իսկ եթէ Հովական Վարչախումբը կատարած առարկութիւնները անհիմն գտնեն, իրենց կատարած առաջարկութիւնը կմնայ իզօրու և դիմողը եկեղեցւոյ անդամակցութեան կը վերահաստատուի:

Բաժին 11. Եկեղեցական Դաստիարակութիւն

(ա) Ուղղիչ դաստիարակութիւնը ակնարկում է անկանոն վարքի կամ հերձած վարդապետութեան որը հակառակ է եկեղեցւոյ կեանքին ու հաւատքին: Նախքան որեւէ քայլառում, դժուարութիւնները յարդելու ու հակառակութիւնները վերացնելու բանաւոր ջանքեր պէտք է թափւեն: Ոչ մի հակառակութիւն պէտք չի բերւի եկեղեցուն, մինչև որ նախ հետևի Քրիստոսի տւած ուսուցմունքը (Մատթէոս 5:25-24, 18:15-16): Եկեղեցական ուղղիչ դաստիարակութեան երբեակ նպատակն է

- (1) Տեղական եկեղեցւոյ սրբութիւնը պահպանելով Աստծուն փառաւորել (Ա. Կորնթացիս 5:6),
- (2) Մեղքից ետ պահելով հաւատացեալներին շինել (Ա. Տիմոթէոս 5:20),
- (3) Հակառակող հաւատացեալին Աստուածաշնչային վարդապետութեան ու կենցաղավարութեան վերադառնալու կոչ ուղղելով հոգևոր բարեկեցկութիւն յառաջացնել (Գաղատացիս 6:1):

(բ) Այս եկեղեցւոյ անդամները և բոլոր ուրիշ Քրիստոնեաները որոնք կանոնաւորապէս յաճախում են կամ հաղորդակցութիւն են անում այս եկեղեցւոյ հետ ու որոնք հերձածողական վարդապետութիւնների են հաւատում, կամ մի այնպիսի վարմունք ունեն որ ըստ Հովական

Վարչախմբին խախտում է Սուրբ Գրքին, Մատթէոս 18:15-18 համաձայն եկեղեցւոյս դաստիարակութեան ու ներառեալ դրսառման ու բանադրութեան ենթակայ կլինեն:

Նախքան այսպիսի արձակման, (1) իւրաքանչիւր անդամի պարտականութիւնն է որ եթէ տեղեակ է մի սխալած անձնաւորութեան հերձաժողովիւնից կամ նրա անկարգութիւնից, որոնելով նրա դարձը և վերականգնումը, անհատաբար զգուշացնի և ուղղի այսպիսի սխալող անձին: Եթէ սխալող անհատը այս զգուշացման ուշադրութիւն չդարձնի, այն պահին (2) զգուշացնող անդամը դարձեալ սխալող անհատին պիտի գնայ, ու որոնելով նրա դարձն ու վերականգնումը, բայց այս անգամ իր հետ պիտի տանի մէկ կամ երկու անձեր որոնք պիտի հաստատեն թէ յանցանք է տեղի ունեցել կամ թէ յանցանքը շարունակուում է տեղի ունենալ, և/կամ այդ սխալող անհատը պատշաճ կերպով յանդիմանել է ու սակայն մերժել է դարձի գալ: Առաջին և երկրորդ զգուշացումները կարելի են տեղի ունենալ առանց որևէ յատուկ ժամանակընթացքի ընդմիջոցի: Եթէ սխալող անհատը դեռ մերժի այս զգուշացումներին հնազանդել, այն ժամանակ (3) նիւթը Հովիւների Վարչախմբին պիտի ներկայացւի:

Եթէ Հովիւների Վարչախմբի 2/3 ը (բոլորը, եթէ Յից պակաս հովիւներ) համեմատ տեսալ կանոնձևին ու առնչակից համարներին, ներառեալ Մատթէոս 18:15-18, և Ա. Տիմոթէոս 5:19, մանրամասն քննարկութիւնից յետոյ որոշեն որ բաւարար փաստեր գոյութիւն ունեն թէ սխալող անհատը մեղք է գործել կամ թէ շարունակուում է մեղանշել, ու թէ նա պատշաճ կերպով յանդիմանել է, և թէ նա մերժել է դարձի գալուց, այնուհետև հովիւները բնականոն մի պաշտամունքի ընթացքին պիտի տեղեկացնեն եկեղեցուն և ժողովրդին որպէսզի եկեղեցին այն անհատին դարձի գալու կոչ ուղղի: Եթէ սխալող անհատը ապաշխարհի, այնուհետև այդ նկատմամբ մի բնականոն պաշտամունքի ընթացքին լուր պիտի տրւի եկեղեցուն: Իսկ եթէ սխալող անհատը հակառակ եկեղեցու հաւաքական կոչին չապաշխարհի, այնուհետև (4) նա հանրապէս մի բնականոն պաշտամունքի ընթացքին հաղորդակցութիւնից և/կամ եկեղեցւոյ անդամակցութիւնից ու ժողովրդից կարձակւի: Եթէ սխալող անհատը այսպիսի արձակումից յետոյ, տրւած զգուշութիւններին ուշադրութիւն անի, ապաշխարհի, և Հովիւների Վարչակազմին վերականգնման խնդրանք ներկայացնի, այնուհետև նա և իր հաղորդակցութեան և/կամ անդամակցութեան բոլոր իրաւունքները, պարտականութիւնները, առանձնաշնորհները և պատասխանատուութիւնները հանրապէս կվերականգնւեն:

(գ) Վերոյիշեալ կէտերով հանդերձ, հովիւներ իրենց դատողութեան գործադրութեամբ, կարելի են ուղղակի յառաջանալ եկեղեցական դաստիարակութեան երրորդ հանգրւանին (գորօրինակ՝ մի բնականոն պաշտամունքի ընթացքին եկեղեցուն և ժողովրդին տեղեկացնել որպէսզի եկեղեցին ապաշխարհութեան կոչ տայ սխալող անհատին), կամ եկեղեցական դաստիարակութեան չորրորդ հանգրւանին (գորօրինակ՝ եկեղեցւոյ հաղորդակցութիւնից և/կամ անդամակցութիւնից դրսառում) երբ տեղի է ունեցել հետևեալներից մէկը կամ աւելին՝

- (1) Երբ յանցանքը ու ապաշխարհութեան մերժումը հանրապէս է տեղի ունեցել:
Այսինքն բացայայտապէս և ամբողջ եկեղեցուն վիրաւորելով (Ա. Կորնթացիս 5:1-5)

- (2) Երբ դաստիարակութեան ենթական ուսուցանել է կամ որևէ ուրիշ կերպով հովիւներին կողմից ծուռ և սխալ սեպւած վարդապետութիւն է տարածել, և այնուհետև անտեսել է հովիւների տւած ուղղութիւնն ու խրատականը (Հռովմայեցիս 16:17), կամ
- (3) Երբ դաստիարակութեան ենթական երկու անգամներ զգուշացւել է դադարելու երկպառատող ու բաժանող վարելակերպից սակայն նա ընտրել է անտեսել այդ զգուշացումը (Տիտոս 3:10-11)

(դ) Այս եկեղեցւոյ անդամները և բոլոր ուրիշ դաւանող Քրիստոնեաները որոնք կանոնաւորապէս յաճախում են կամ հաղորդակցում են այս եկեղեցւոյ հետ, համաձայնում են որ եկեղեցական դաստիարակութեան երրորդ կամ չորրորդ հանգրւանի դաստիարակութեան հետևանքով կատարւած բոլոր հանրային յայտարարութիւնների պատճառով որևէ մի դատարանին ոչ մի վերատեսութիւն գոյութիւն չի ունենալ: Անդամներ որոնք ըստ վերոյիշեալ բաժինների սահմանումներին, եկեղեցական դաստիարակութեան ենթակայ են դառնում, կորցնում են ու ձեռքից տալիս են այս եկեղեցւոյց իրենց հրաժարականը տալուց: Անդամակցութիւնից հրաժարութիւնները միմիայն կարելի են այն անդամներից որոնց անդամակցութիւնը կայուն վիճակի մէջ է ու նրանք որևէ դաստիարակութեան արարքի ենթակայ չեն:

Յօդւած 6

Պաշտօնեաներ

Բաժին 1. Ընդհանուր

Միայն Յիսուս Քրիստոսն է Իր եկեղեցւոյ Գլուխը: Սակայն, որպէս Գլուխ, նա կարգել է որ իւրաքանչիւր եկեղեցի իր հոգևոր տնօրէնութեան և ծառայութեան յատուկ պաշտօնեաներով օրհնւած լինի: Թէպէտ յստակ է որ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ Աստծոյ առաջին մի սուրբ և անարատ կեանք ապրելու է կանչւել (Փիլիպպեցիս 2:14-16, Եփեսացիս 1:4), այդ հաւասարապէս յստակ է որ նրանց համար որոնց վստահում է եկեղեցւոյ հոգևոր առաջնորդութիւնն ու հոգատարութիւնը, այս կոչումը պահանջւած է մի աւելի բարձր աստիճանով: Մինչ նրանք մի աւելի բարձր պատի ու հեղինակութեան դիրք են գրաւում, նոյնպէս նրանք աւելի մեծ պատասխանատւութեան և հաշւետւութեան են կանչւել:

Ուստի, եկեղեցւոյ ջերմեռանդ պարտականութիւնն է որոնել ու գտնել նրանց որոնց Քրիստոս Տէրն է կանչել և պաշտօնակրութեան պէտք եղած պարգևները տւել, և պաշտօնապէս ճանաչում տալով այսպիսիներին, միաբանւած աղօթքով ջոկել ու նրանց տնօրինութեան և ծառայութեան հնազանդել:

Քրիստոս կարգել է որ տեղական եկեղեցին տնօրինւի հովիւներով և սարկաւագներով, այս երկու պաշտօնները որոնք մինչև Քրիստոսի վերադարձը պիտի շարունակւեն:

Բաժին 2. Հովիւներ (Երէցներ)

Աստուածաշնչի մէջ Հովիւ, Եպիսկոպոս, և Երէց բառերը բոլորն էլ գործ են ածուել ակնարկելով եկեղեցւոյ մէջ եղած նոյն պաշտօնին: Հովիւները պատասխանատու են եկեղեցւոյ ծառայութիւնների, եկեղեցւոյ դաստիարակութեան գործադրութեան, և անդամների հոգիների վրայ հսկողութեան իբրև անձեր որոնք այս պատասխանատուութեան համար Աստծուն հաշիւ պիտի տան: Նրանք եկեղեցւոյ բոլոր ծառայութիւնների և գործունէութիւնների իրենց հսկողութիւնը պիտի գործադրեն: Այս Հովական պաշտօնին ցանկացող մէկը պէտք է ապացուցի Ա. Տիմոթէոս 3:1-17 և Տիտոս 1:5-9 համարների մէջ նշած անհատական, ընտանեկան, և ծառայութեան որակումները: Հովիւները պէտք են իրենց պարտականութիւնները գործադրեն Սուրբ Գրքում գրածի՝ յատկապէս Գործք Առաքելոց 20:17 և հետևեալ համարների, Ա. Պետրոս 5:1-4, և Եբրայեցիս 13:17 համեմատ:

Պօղոս Առաքեալն Ա. Տիմոթէոս 3 գլխում խօսում է Երէցների (Հովիւներ) և նրանց որակումների մասին: Նոյն նամակի 5:17ի մէջ նա գրում է **"Լաւ"** Սա յստակաբար ցոյց է տալիս որ երիցութեան պաշտօնում կային երէցներ որոնք միայն մէկ բան էին անում այսինքն կառավարում էին, մինչ նաև կային երէցներ որոնք երկու բաներ էին անում այսինքն թէ կառավարում էին և թէ աշխատում էին քարոզելով և ուսուցանելով:

Ուրեմն Սուրբ Գրքի համաձայն, այս եկեղեցին ճանաչում է Ուսուցանող-Կառավարող Հովիւներ, ինչպէս նաև Կառավարող Հովիւներ (Գործք Առաքելոց 6:4, Ա. Տիմոթէոս 5:17-18): Թէպէտ երկու պաշտօններն էլ պատկանում են Երիցութեան, սակայն նրանց միջև մի կարևոր պատասխանատուութեանց բաժանում կայ:

- **Ուսուցանող Կառավարող Հովիւ** – Մինչ իւրաքանչիւր հովիւ եկեղեցւոյ հոգևոր կառավարչութիւնն է կրում, և նա պէտք է ուսուցանելու ատակ լինի, ոմանք աւելիով զբաղւած են պաշտօնական և հանրային ուսուցանութեամբ, աղօթքի պարապելով, և Աստծոյ խօսքի և դրա վարդապետութիւնների ուսումնասիրութեամբ: Նրանք եկեղեցւոյ առաջնակարգ քարոզիչներն ու ուսուցիչներն են:

Այսուհետև Ուսուցանող-Կառավարող Հովիւները այս գրութեան մէջ և եկեղեցւոյս առնչակցութեամբ Ուսուցանող Հովիւներ են կոչում:

- **Կառավարող Հովիւներ** – Թէպէտ այս հովիւները մասնակից են հոգևոր ծառայութեան, և պաշտօնով հաւասար են Ուսուցանող Հովիւներին, նրանք աւելի առաւել զբաղւած են կառավարչութեան մանրամասնութիւններով, ժողովրդին հսկելով, անդամների հովական խնամատարութեամբ, դաստիարակութեամբ, առաջնորդութեամբ, և օրինադրութեամբ: Նրանք կանչւած են հաւատարմաբար, իմաստութեամբ, զանազանութեամբ և ուղիղ դատողութեամբ կառավարել եկեղեցուն:

- Կառավարող Հովիւները Ուսուցանող-Կառավարող Հովիւների հաւասար քւէ և բոլոր պարագաներում նրանց հետ նոյն հեղինակութիւնն ունեն: Մի կառավարող Հովիւ, ըստ Տիրոջ առաջնորդութեան, ու միգուցէ յաւելեալ աստուածաբանական կրթութեան և վարժողութեան շնորհիւ, կարելի է եկեղեցւոյ Ուսուցանող Հովիւ դառնայ:

Հովական պաշտօնին կոչւած որևէ մէկը պէտք է խղճմտաբար այս եկեղեցւոյ Հաւատոյ Հանգանակի հետ իր համաձայնութիւնը հաստատի: Իր տեսանկիւնը փոխելու պարագային, նա հոգևոր և բարոյական պարտականութեան տակ է սրա մասին իմացնել Հովիւների Վարչախմբին:

Հովիւները հնազանդ են իրարու , նրանցից ոչ մէկը բարձրագոյն հեղինակութիւն ունենալով:

Բաժին 3. Հովիւների Ընտրութիւն

Հովիւները ընտրուում են Հովիւների Վարչախմբի կողմից և հաստատուում են եկեղեցւոյ անդամներից եկեղեցական տարեկան ժողովի կամ յատուկ մի ժողովի ընթացքին: Հովական Վարչախումբը հովիւին ընտրում է իր միաձայն քւէով և եկեղեցւոյ անդամները վաւերացնում են Հովական Վարչախմբի որոշումը իրենց վաւերացման ժողովին ներկայ գտնուող անդամների $\frac{3}{4}$ քւէով:

Մի հովիւ իր պաշտօնում շարունակում է աննախորոշ ժամանակի տևողութեամբ ենթակայ հետևեալ վերապահութիւններին՝

- (ա) Եթէ հովիւի կեանքը և ուսուցմունքը այս եկեղեցւոյ շափանչերը խախտեն (ըստ Յօդւած 3 – Հաւատոյ Հանգանակ, և Յօդւած 6 – Հովիւների Որակաւորում), և Հովիւների Վարչախումբի միաձայն առաջարկութեամբ, ժողովրդի ժողովից յետոյ հովիւի ծառայութիւնը կը վերջանայ, որի ընթացքին հովիւի արձակումը վաւերացնում է այդ ժողովին ներկայ գտնուող անդամների մեծամասնութեան քւէով: Արձակումը կարելի է լինել անմիջական կամ մէկ ամսւայ ազդարարութեամբ:
- (բ) Եթէ հովիւը հրաժարելու և եկեղեցին թողնելու նպատակ ունի, մէկ ամսւայ ազդարարութիւն տալով:

Հովիւի հրաժարման կամ արձակման ժամընթացը հովիւի և եկեղեցւոյ երկուստէք համաձայնութեամբ կարելի է աւելի կարճ լինել:

Ուսուցանող հովիւի մահւան պարագային, Հովիւների Վարչախումբը կամ աղօթքով նրա պարտականութիւններն ու լիազօրութիւնները կյանձնձեն մի ուրիշ ուսուցանող հովիւի, կամ մի նոր ուսուցանող հովիւ կընտրեն (Տես այս Յօդւածի 7 – 9 բաժինները): Նոր ուսուցանող հովիւը պարտի հնազանդել հաւատոյ վարդապետութեանց ինչպէս նշել է այս ծրագիր կանոնագրի մէջ և պարտի համաձայնել հնազանդելու այս գրութեան մէջ նշւած տւեալներին:

Բաժին 4. Ուսուցանող Հովիւների Պարտականութիւնները

Ուսուցանող հովիւները պաշտօնապէս բոլոր խորհրդախմբերի և յանձնախմբերի անդամներ են, և պատասխանատու են Հովական Վարչախմբին: Ուսուցանող հովիւները պարտին բոլոր հանրային և բնականոն պաշտամունքները կարգադրել և առաջնորդել, և եկեղեցւոյ հոգևոր բարեկեցութեան ընդհանուր հսկողութեան պատասխանատուներն են: Ուսուցանող հովիւները կառավարում են բեմի և ուսուցչութեան ծառայութիւնը, և խորհուրդների մատակարարութիւնը: Ուսուցանող հովիւի (հովիւների) բացակայութեան, Հովիւների Վարչախումբը, կամ նրանց նշանակած տեղակալը, եկեղեցւոյ հանրային և բնականոն պաշտամունքների պատասխանատուն կը լինի:

Բաժին 5. Հովիւների Վարչախմբի Լիազօրութիւնները

Այս Ծրագիր Կանոնագրի Յօդաւանդների սահմանումների և Քալիֆօրնիայի Նահանգի Ընկերութեան Օրէնքի սահմանափակումներին, Ընկերութեան բոլոր գործունէութիւնները և զբաղումները պէտք է Հովիւների Վարչախմբի ուղղութեան տակ տեղի ունենան, որոնք հօտի հոգևոր հովուութեան և հսկողութեան պատասխանատուներն են: Առանց այսպիսի ընդհանուր լիազօրութեանց հանդէպ նախապաշարումների, բայց ենթակայ նոյն սահմանումներին, այսու բացայայտաբար յայտարարում է թէ այս Ծրագիր Կանոնագրի ուրիշ նշած լիազօրութեանց Հովիւների Վարչախումբը հետևեալ յաւելեալ լիազօրութիւններն էլ ունի՝

- (ա) Ընտրել կամ վտարել Ընկերութեան բոլոր պաշտօնեաներին, ներկայացուցիչներին, հովիւներին, աշխատակիցներին; Սուրբ Գրոց, օրէնքի, Ընկերութեան Հիմնագրութեան Յօդաւանդների և Ծրագիր Կանոնագրի համեմատ պարտականութիւններ պատիրել; և նրանց պաշտօնների ու հատուցման պայմանները կարգել:
- (բ) Ընկերութեան ունեցւածքից և դրամագլխից այս Ընկերութեան նպատակները լրացնող կարիքների համար վճարումներ կատարել: Այս նպատակները աւելի լրիւ կերպով նշել են Հիմնագրութեան Յօդաւանդների մէջ: Նաև ընդհանրապէս Ընկերութեան գործունէութիւնները և զբաղումները վարեն, տնօրինեն, և կառավարեն ու Սուրբ Գրոց, օրէնքի, Հիմնագրութեան Յօդաւանդների կամ այս Ծրագիր Կանոնագրի համապատասխան և իրենց ամենայարմար նկատածի համեմատ այսպիսի կանոններ և կարգաւորութիւններ մշակեն:
- (գ) Ընկերութեան համար մի դրոշմանշան շինել, որդեգրել ու գործածել, ու ժամանակ առ ժամանակ այս դրոշմանշանի ձևը իրենց ամենայարմար նկատածի համեմատ փոփոխութեան ենթարկել:
- (դ) Այս Ընկերութեան նպատակներին համեմատ կանոններ և գործելակերպներ հիմնարկել,
- (ե) Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդները մատակարարել

- (գ) Ընկերութեան նպատակների համար, ու նրանց պատճառելու և նրանց իրագործելու համար, Ընկերութեան անլան տակ, դրամ, խոստումնագրեր, պարտագրեր, կալածագրեր, կալածապարտքեր, խոստումներ, և ուրիշ պարտքի միջոցառումներ պարտք առնել:
- (է) Առուտուր անել և շահած հասոյթը օրինաւոր կերպով այդ առուտութեան մէջ ներդրել:

Բաժին 6. Հովիւների Թիւ

Հովիւների թիւը երկուսից պակաս լինելու չի, ու ըստ Տիրոջ առաջնորդութեան և պէտքի համաձայն ու Հովական Վարչախմբի կողմից պատշաճ նկատւած պարագային կարելի է աւելանալ:

Բաժին 7. Հովիւների Որակումներ

Երիցութիւնը եկեղեցւոյն հովւելու ու ծառայելու աստւածային կոչում է: Մի հովիւ պէտք է այս եկեղեցւոյ գործօն անդամ լինի ու Ա. Տիմոթէոս 3:1-7 և Տիտոս 1:6-9ի մէջ նշւած որակումներն ունենայ: Նրան պէտք է լինել՝

- (ա) Որպէս Աստծոյ տնտես անարատ, անպախարակելի (Ա. Տիմոթէոս 3:2, Տիտոս 1:6-7)
- (բ) Մէկ կնոջ այր, միակին տղամարդ (Ա. Տիմոթէոս 3:2, Տիտոս 1:6)
- (գ) Հանդարտաբարոյ, զգաստ, աշալուրջ (Ա. Տիմոթէոս 3:2)
- (դ) Արթուն, խոհեմ (Ա. Տիմոթէոս 3:2, Տիտոս 1:8)
- (ե) Բարի վարքով, կարգապահ, պատւաւոր (Ա. Տիմոթէոս 3:2)
- (զ) Հիւրասէր (Ա. Տիմոթէոս 3:2, Տիտոս 1:8)
- (է) Սովորեցնելու յարմար, հաւատացեալներին յողորելու և հակառակորդներին յանդիմանելու ատակ (Ա. Տիմոթէոս 3:2, Տիտոս 1:9)
- (ը) Ոչ գինեմոլ (Ա. Տիմոթէոս 3:3, Տիտոս 1:7)
- (թ) Ոչ զարնող, ոչ կուարար (Ա. Տիմոթէոս 3:3)
- (ժ) Համբերատար, զուսպ, երկայնամիտ, ազնիւ (Ա. Տիմոթէոս 3:3)
- (ժա) Ոչ յանդուգն, ոչ գրգուռող, ոչ բարկացկոտ կամ շուտ ջղայնացող (Ա. Տիմոթէոս 3:3, Տիտոս 1:7)
- (ժբ) Ոչ ցանկամոլ, ոչ արծաթասէր, ոչ պիղծ շահ սիրող (Ա. Տիմոթէոս 3:3, Տիտոս 1:7)

- (ժգ) Իր ընտանիքը լաւ կառավարող, զաւակները հաւատարիմ և առանց անառակութեան կամ անհնազանդութեան գանգատով (Ա. Տիմոթէոս 3:4, Տիտոս 1:7)
- (ժդ) Ոչ նորահաւատ, ոչ նորադարձ (Ա. Տիմոթէոս 3:6)
- (ժե) Դրսիներից բարի վկայութիւն ունեցող (Ա. Տիմոթէոս 3:7)
- (ժզ) Ոչ ինքնակամ (Տիտոս 1:7)
- (ժէ) Բարի մարդկանց ու բարի բաներ սիրող (Տիտոս 1:8)
- (ժը) Արդար, անաշառ (Տիտոս 1:8)
- (ժթ) Սուրբ, նւիրւած (Տիտոս 1:8)
- (ի) Ժուժկալ (Տիտոս 1:8)

Թափն 8. Հովիւների Անւանակոչումը, Ընտրութիւնը և Ծառայութեան Ընթացքը

Հովիւները ըստ Տիրոջ առաջնորդութեան ու համեմատ անւանակոչւած անձի որակումներին, կարող են որևէ ժամանակ հովական թեկնածուներ անւանակոչել:

Հովական Վարչախումբը անւանակոչւածների անունները կը վաւերացնի, կը մերժի, կը ջնջի կամ կաւելացնի: Վաւերացւած թեկնածուներ կսկսեն մէկ տարւայ աշակերտութեան ընթացքը, որը կարելի է Հովիւների Վարչախմբի միաձայն վաւերացումով աւելի կարճ տևել, և ըստ Հովիւների Վարչախմբի յանձնարարութեան կարելի է զանազան ծառայութեան պարտականութիւններ ընդգրկել: Այս շրջանին պաշտօնակիրը պիտի միանայ Հովիւների Վարչախմբին յաճախելով բոլոր ժողովներին՝ առանց քւէարկելու լրագորութեամբ:

Աշակերտութեան շրջանի աւարտին, Հովական Վարչախումբը կը վերատեսեն թեկնածուին և միաձայն վաւերացումից յետոյ թեկնածուի վաւերացումը եկեղեցական անդամական ժողովից գոնէ երեք շաբաթներ առաջ, կը յայտարարւի եկեղեցւոյ ժողովրդին: Այս անդամական ժողովի ընթացքին թեկնածուն կը ներկայացւի անդամներին որպէսզի անդամներ հաստատեն Հովիւների Վարչախմբի որոշումը:

Փափաքելի է որ ժողովուրդը նոյն միտքն ունենան այն պաշտօնակրերի հանդէպ որոնց նրանք պարտին հնազանդել Տիրոջմով, սակայն եթէ լրիւ միաձայնութիւն չստացւի, իւրաքանչիւր պաշտօնակիր թեկնածուն հաստատուելու է անդամական ժողովում ներկայ գտնուող անդամների ³/₄ մեծամասնութեան քւէով:

Թեկնածուների անունները ժողովրդին տալուց յետոյ, պիտի խնդրւի որ թեկնածուներ մեկնեն ժողովրդի ներկայութիւնից, որից յետոյ տւեալ պաշտօնի Սուրբ Գրային որակումները ժողովրդին պիտի կարդացւի, ու այն նշւած որակումների մասին բացայայտաբար խօսւի: Ա. Տիմոթէոս 3 և

Տիտոս 1 գլուխների ուղղութեամբ տեղի ունեցած լրիւ ու ազատ խօսակցութիւնից յետոյ գրաւոր քւէ կտրւի: Քւէն իզօրու է իր առաջին գրաւոր քւէագրի համաձայն:

Պաշտօնակրի վերջնական ճանաչումից յետոյ, մի բնականոն պաշտամունքի մասը կը յատկացւի պաշտօնակրին նրան պաշտօնապէս կարգելու իր պատասխանատուութեանց համար՝ աղօթքով և ներկայիս հովիւների ձեռնադրութեամբ:

Վաւերացման հիման վրայ թեկնածուն անմիջապէս կստանձնի Հովիւի պաշտօնը և Հովական Վարչախմբի քւէարկող անդամ կգառնայ: Հովիւը կը ծառայի աննախորոշ ժամընթացքով մինչև որ իր պաշտօնադիրքը դատարկւի այս Յօդւածի Բաժին 9ի համեմատ, կամ նա պաշտօնից վերցւի այս Յօդւածի Բաժին 10ի համեմատ:

Հովիւների ձեռնադրութեան, արտօնագրութեան և պաշտօնակոչութեան համար տեսնել Յօդւած 9:

Եթէ աշակերտութեան ընթացքին թեկնածուն չհաստատուի Հովիւների Վարչախմբի կողմից, այնուհետև նա վաւերացման համար չի ներկայացուել ժողովրդին: Ապագային անհատը կարելի է վերանկատութեան ենթարկւի կախեալ նրա անձնական յառաջադիմութեանց, յաւելեալ կրթութեան ու վարժողութեան, և ուրիշ որևէ աւելի ուշադրութիւն պահանջող մարզերից, երբ այն ժամանակ աշակերտութեան ընթացքը պիտի կրկնւի:

Բաժին 9. Հովիւների Պաշտօնի Դատարկութիւններ

Կարելի որևէ հովիւի Հովիւների Վարչախմբի Ատենապետին կամ Ատենադպրին գրաւոր յայտագրութիւն տալով հրաժարուել: Հովական Վարչախմբի մէջ պաշտօնի դատարկութիւն տեղի կունենայ մի հովիւի մահուայ, հրաժարումի, կամ պաշտօնազրկման պարագային, կամ եթէ պէտքի համաձայն հարկաւոր սեպւի աւելացնել ներկայիս հովիւների թւին: Հովական Վարչախմբի մէջ գոյացուած պաշտօնի դատարկութիւնը կարելի է լցւի Հովիւների Վարչախմբի կողմից:

Եկեղեցւոյ հովիւներից որևէ մէկի բացակայութեան պարագային, կամ Հովիւների Վարչախմբին գոհացնող որևէ ուրիշ պատճառով, կարելի է Հովիւների Վարչախումբին նրա պարտականութիւնները և լիազօրութիւնները որևէ ուրիշ հովիւի կամ հովիւների խմբին յանձնել:

Բաժին 10. Հովիւների պաշտօնազրկում

Որևէ հովիւ կարելի է պաշտօնազրկւի մի բնականոն կամ յատուկ կազմակերպուած Հովիւների Վարչախմբի ժողովի ընթացքին եթէ գտնւի որ նա մարմնապէս կամ մտայնապէս անկարող կամ հոգևորապէս անատակ է (համեմատ Սուրբ Գրքի առնչակից բաժիններին ներառեալ Ա. Տիմոթէոս 3:1-7, Տիտոս 1:1-9), կամ այս եկեղեցւոյ շափանչերը խախտող ուսուցման համար, Հովիւների Վարչախմբին հաստատող հետախուզումով և միաձայն համաձայնութեամբ (կամ Հովիւների Վարչախմբի առանձնական դատողութեամբ կարգուած յանձնախմբի), համեմատ Սուրբ Գրքի առնչակից բաժիններին ներառեալ Մատթէոս 18:15-18 և Ա. Տիմոթէոս 5:9:

Հովիւները շափազանց զգուշութեամբ, ամբողջութեամբ, և անաշուտութեամբ են մօտենալու այս խնդրին: Երբ մի հովիւ պաշտօնազրկուում է մեղքի հետևանքով որը բաւարար է սեպուում

անատակել նրան անատակ հովուներին անելուց, և նա մերժում է ապաշխարհել այդ մեղքից, պաշտօնագրկումը հանրային սաստում կունենայ, և յայտագրութիւնը մի բնականոն կազմակերպած պաշտամունքի ընթացքին կներկայացուի եկեղեցւոյ ժողովրդին, ըստ Ա. Տիմոթէս 5:20 պատուէրին:

Բաժին 11. Հովիւների Բնականոն Ժողովանիստներ

Հովիւների Վարչախումբը պէտք է ունենայ իր բնականոն նազագոյն երկամսեայ ժողովանիստները, որոնց թւականը կորոշեն Վարչախմբի կողմից:

Բաժին 12. Հովիւների Յատուկ Ժողովանիստներ

Հովիւների Վարչախմբի յատուկ ժողովանիստները կարելի են կազմակերպել որևէ ժամանակ Հովիւների Վարչախմբի Ատենապետի, կամ Փոխ-Ատենապետի կամ Ատենադպրի կամ Վարչախմբի անդամների օրինաթւի կոշով:

Բաժին 13. Հովիւների Ժողովանստի Օրինաթիւ

Հովիւների մեծամասնութիւնը ներկայացնում է Օրինաթիւը ի բացառեալ երբ պաշտօնի դատարկութիւնը արգիլում է այսպիսի մեծամասնութիւն ունենալուց, որի պարագային պաշտօնակիր Հովիւների մեծամասնութիւնը կազմում է Օրինաթիւը, տւեալ որ այսպիսի մեծամասնութիւնը Հովիւների արտօնած թւի 1/3 է կամ նազագոյնը երկու հովիւներ են, այն պարագան որ աւելի շատ է, կամ միթէ որ արտօնած թիւը միայն մէկ է: Ներկայ հովիւների մեծամասնութիւնը, անկախ թէ օրինաթիւը ներկայ է կամ ոչ, կարելի է նրանց որևէ մի նստաժողովը մի ուրիշ տեղ կամ պահի յետաձգել:

Երբոր նկատի առնելու նիւթը մի հովիւի պաշտօնակոշութիւնն կամ պաշտօնագրկումն է, կամ կալւածի գնումն է, Հովիւների Վարչախմբի միաձայն վաւերացումը հարկաւոր է: Ի բացառեալ Հիմնադրութեան Յօդաձեւերին, այս Ծրագիր կանոնագրի և Քալիֆորնիա Նահանգի Ընկերութեան օրէնքի համեմատ, այն արարքը կամ որոշումը որ օրինաթիւ հովիւների ներկայութեան հաւաքով է կատարուում կամ տեղի ունենում, դա Հովիւների Վարչախմբի արարքն է համարուում:

Բաժին 14. Հեռաձայնատեսիլային Ժողովների Մասնակցութիւն

Հովիւների Վարչութեան անդամներին կարելի է հեռաձայնատեսիլային և/կամ հեռաձայնի միջոցառումներով կամ նման հաղորդակցութեան գործիքներով ժողովների մասնակցել, մինչև այն ժամանակ որ բոլոր այսպիսի ժողովի մասնակից անդամները կարող են մէկգմէկ տեսնել և/կամ լսել:

Բաժին 15. Յետաձգում

Ներկայ եղոց Հովիւների մեծամասնութիւնը, անկախ նրանց օրինաթւական ներկայութեան, կարող են հովիւների ժողովը մի ուրիշ պահի և վայրի յետաձգել: Յետաձգւած ժողովի պահի և վայրի յայտարարութիւնը կտրւի բացակայ հովիւներին որոնք ներկայ չէին յետաձգութեան ժամանակ:

Բաժին 16. Առանց Ժողովի Արարք

Որևէ արարք հարկադրւած կամ արտօնւած Հովիւների Վարչախմբից կարելի է տեղի ունենայ առանց ժողովի եթէ Վարչախմբի բոլոր անդամները անձնապէս կամ հաւաքապէս գրաւոր կերպով համաձայնեն այսպիսի արարքի ըստ արժանւոյն պատրաստւած որոշման: Այսպիսի համաձայնութիւնները Հովիւների Վարչախմբի միաձայն քւէարկութեան հաւասար ազդեցութիւնը ունեն, և գրաւոր ու ստորագրւած որոշագիրը կը կցւի Վարչախմբի ատենագրութեան:

Բաժին 17. Քննարկութեան Իրաւունքներ

Իւրաքանչիւր հովիւ բացարձակ իրաւունք ունի որևէ յարմար պահին քննարկելու բոլոր ամէն տեսակ հաշւետետրակաները, արձանագրութիւնները, և փաստաթղթերը որոնք այս Ընկերութեան պատկանութիւններն են ու որին այն անհատը հովիւ է, հովւական պատշաճ և առնչակից հետաքրքրութեան նպատակով:

Բաժին 18. Վարձատրութիւն

Որքան որ կարելի է, հովիւները պէտք է վարձատրւեն, այնպէս որ նրանք աշխարհական աշխատանքների հոգսերից ձերբազատւած կարողանան իրենց ու իրենց ընտանիքի պիտոյքները հոգալ (Ա. Տիմոթէոս 5:17-18): Այսպիսի որոշումը նաև կախեալ է անհատի աշխատանքային պարագաներից և նրա պիտոյքներից, եկեղեցական պարտականութիւններից, և Հովիւների Վարչախմբի դատողութիւնից: Որևէ անհատ որ վարձատրոււմ է Հայ Վերակազմ Աստուծաշնչի Եկեղեցւոյ կողմից այն դրութեան մէջ չի որ տւեալ վարձատրութեան բնոյթի կամ շափի մասին որոշում կայացնի:

Բաժին 19. Սարկաւագներ

Սարկաւագութեան պաշտօնը աստուծային կոչում է ծառայելու եկեղեցուն դրամական և ընթացիկ խնդիրների ծառայութեամբ (Գործք Առաքելոց 6:1-3): Նրանք պատասխանատուութիւն յանձն առնելու են գոյացնելու եկեղեցու ֆիզիքական, սարքաւորման, և դրամական ներառեալ չքաւորներին օժանդակելու յատկացւած դրամագլխ տնօրինութեան պիտոյքները, նաև հոգալու եկեղեցւոյ անդամների բարեկեցկութեան պիտոյքները նրանց բարեգործութիւն հոգատարութիւն, ծառայութիւն, հիւրասիրութիւն, այցելութիւն, կարգապահութիւն, և ընդառաջութիւն մատակարարելով:

Սարկաւագները պատասխանատու են եկեղեցւոյ նիւթական և առևտրական կարիքների համար, որոնք տնօրինւելու են հոգևոր շնորհքով ու իմաստութեամբ, և Հովիւների հետ գործակցութեամբ՝ հնազանդելով նրանց: Նրանք ֆիզիքական կարիքաւորներին ողորմարար ծառայութիւն են մատուցանելու, նամանաւանդ եկեղեցու մէջ գտնւողներին: Նրանք պահում են եկեղեցամարզը:

Սարկաւագները պարտին օգնել հովիւներին սրբերի հովուութեան մէջ, օգնել Հաղորդութեան ու Մկրտութեան պաշտամունքների ընթացքին, օգնել եկեղեցւոյ ընդհանուր հոգատարութեան մէջ և Հովիւների Վարչութիւնից յանձնարարւած ուրիշ պարտականութիւններ կատարել:

Սարկաւագների թիւը երկուսից պակաս լինելու չի, ու ըստ Տիրոջ առաջնորդութեան և պէտքի համաձայն ու Հովական Վարչախմբի կողմից պատշաճ նկատած պարագային կարելի է աւելանալ:

Բաժին 20. Սարկաւագների Որակումներ

Մի սարկաւագ պէտք է այս եկեղեցույ գործօն անդամ լինի ու Ա. Տիմոթէոս 3:8-13ի մէջ նշւած որակումներն ունենայ: Նրան պէտք է լինել՝

- (ա) Ծանրաբարոյ (Ա. Տիմոթէոս 3:8)
- (բ) Ոչ երկկեզու (Ա. Տիմոթէոս 3:8)
- (գ) Ոչ գինեմոլ (Ա. Տիմոթէոս 3:8)
- (դ) Ոչ պիղծ շահ սիրող (Ա. Տիմոթէոս 3:8)
- (ե) Հաւատքի խորհուրդը սուրբ խղճմտանքի մէջ ունեցող (Ա. Տիմոթէոս 3:9)
- (զ) Անարատ, նախ փորձւած ապա պաշտօնավարող (Ա. Տիմոթէոս 3:10)
- (է) Սարկաւագների կանայք լինելու են ծանրաբարոյ, ոչ շարախօս այլ զգաստ, ամէն բանի մէջ հաւատարիմ (Ա. Տիմոթէոս 3:11)
- (ը) Մէկ կնոջ այր, միակին տղամարդ (Ա. Տիմոթէոս 3:12)
- (թ) Իր զաւակները և ընտանիքը լաւ կառավարող (Ա. Տիմոթէոս 3:12)

Բաժին 21. Սարկաւագների Անւանակոչումը, Ընտրութիւնը և Ծառայութեան Ընթացքը

Հովիւները ըստ Տիրոջ առաջնորդութեան ու համեմատ անւանակոչւած անձի որակումներին, կարող են որևէ ժամանակ Սարկաւագների թեկնածուներ անւանակոչել:

Հովական Վարչախումբը անւանակոչւածների անունները կը վաւերացնի, կը մերժի, կը ջնջի կամ կաւելացնի: Վաւերացւած թեկնածուներ կսկսեն մէկ տարւայ աշակերտութեան ընթացքը, որը կարելի է Հովիւների Վարչախմբի միաձայն վաւերացումով աւելի կարճ տևել, և ըստ Հովիւների Վարչախմբի յանձնարարութեան կարելի է զանազան ծառայութեան պարտականութիւններ ընդգրկել: Այս շրջանին պաշտօնակիրը պիտի միանայ բոլոր այն ժողովներին որոնք սարկաւագների յաճախումն են պահանջում՝ առանց քէտարկելու լիազօրութեամբ:

Աշակերտութեան շրջանի աւարտին, Հովական Վարչախումբը կը վերատեսեն թեկնածուին և միաձայն վաւերացումից յետոյ թեկնածուի վաւերացումը եկեղեցական անդամական ժողովից գոնէ երեք շաբաթներ առաջ, կը յայտարարուի եկեղեցույ ժողովողին: Այս անդամական ժողովի ընթացքին թեկնածուն կը ներկայացուի անդամներին որպէսզի անդամներ հաստատեն Հովիւների Վարչախմբի որոշումը:

Փափաքելի է որ ժողովուրդը այն պաշտօնակրերի հանդէպ նոյն միտքն ունենան, որոնց նրանք պարտին հնազանդել Տիրոջմով, սակայն եթէ լրիւ միաձայնութիւն չստացւի, իւրաքանչիւր պաշտօնակիր թեկնածուն հաստատուելու է անդամական ժողովում ներկայ գտնուող անդամների $\frac{3}{4}$ մեծամասնութեան քւէով:

Թեկնածուների անունները ժողովրդին տալուց յետոյ, պիտի խնդրւի որ թեկնածուներ մեկնեն ժողովրդի ներկայութիւնից, որից յետոյ տւեալ պաշտօնի Սուրբ Գրային որակումները ժողովրդին պիտի կարգացւի, ու այն նշած որակումների մասին բացայայտաբար խօսուի: Ա. Տիմոթէոս 3 գլխի ուղղութեամբ տեղի ունեցած լրիւ ու ազատ խօսակցութիւնից յետոյ գրաւոր քւէ կտրուի: Քւէն իզօրու է իր առաջին գրաւոր քւէագրի համաձայն:

Պաշտօնակրի վերջնական ճանաչումից յետոյ, մի բնականոն պաշտամունքի մասը կը յատկացւի պաշտօնակրին նրան պաշտօնապէս կարգելու իր պատասխանատուութեանց համար՝ աղօթքով և ներկայիս հովիւների ձեռնադրութեամբ:

Իւրաքանչիւր սարկաւագ կը ծառայի աննախորոշ ժամընթացքով մինչև որ իր պաշտօնադիրքը դատարկւի այս Յօդուածի Բաժին 22ի համեմատ, կամ նա պաշտօնից վերցւի այս Յօդուածի Բաժին 23ի համեմատ:

Եթէ աշակերտութեան ընթացքին թեկնածուն չհաստատուի Հովիւների Վարչախմբի կողմից, այնուհետև նա վաւերացման համար չի ներկայացուել ժողովրդին: Ապագային անհատը կարելի է վերանկատութեան ենթարկւի կախեալ նրա անձնական յառաջադիմութեանց, յաւելեալ կրթութեան ու վարժողութեան, և ուրիշ որևէ աւելի ուշադրութիւն պահանջող մարզերից, երբ այն ժամանակ աշակերտութեան ընթացքը պիտի կրկնուի:

Բաժին 22. Սարկաւագների Պաշտօնի Դատարկութիւններ

Կարելի որևէ սարկաւագի Հովիւների Վարչախմբի Ատենապետին կամ Ատենադպրին գրաւոր յայտագրութիւն տալով հրաժարուել: Սարկաւագների Վարչախմբի մէջ պաշտօնի դատարկութիւն տեղի կունենայ մի սարկաւագի մահուայ, հրաժարումի, կամ պաշտօնազրկման պարագային, կամ եթէ պէտքի համաձայն հարկաւոր սեպւի աւելացնել ներկայիս սարկաւագների թւին: Սարկաւագների Վարչախմբի մէջ գոյացւած պաշտօնի դատարկութիւնը կարելի է լցւի Հովիւների Վարչախմբի կողմից:

Եկեղեցւոյ սարկաւագներից որևէ մէկի բացակայութեան պարագային, կամ Հովիւների Վարչախմբին գոհացնող որևէ ուրիշ պատճառով, կարելի է Հովիւների Վարչախումբին նրա պարտականութիւնները և լիազօրութիւնները որևէ ուրիշ սարկաւագի կամ սարկաւագների խմբին յանձնել:

Բաժին 23. Սարկաւագների պաշտօնազրկում

Որևէ սարկաւագ կարելի է պաշտօնազրկւի մի բնականոն կամ յատուկ կազմակերպւած Հովիւների Վարչախմբի ժողովի ընթացքին եթէ գտնուի որ նա մարմնապէս կամ մտայնապէս անկարող կամ

հոգևորապէս անատակ է (համեմատ Սուրբ Գրքի առնչակից բաժիններին ներառեալ Ա. Տիմոթէոս 3:8-9, 12-13), կամ այս եկեղեցւոյ շափանշերը խախտող ուսուցման համար, Հովիւների Վարչախմբին հաստատող հետախուզումով և միաձայն համաձայնութեամբ (կամ Հովիւների Վարչախմբի առանձնական դատողութեամբ կարգաժամանակախմբի), համեմատ Սուրբ Գրքի առնչակից բաժիններին ներառեալ Մատթէոս 18:15-18 :

Հովիւները շափազանց զգուշութեամբ, ամրութեամբ, և անաշառութեամբ են մօտենալու այս խնդրին: Երբ մի սարկաւագ պաշտօնազրկուում է մեղքի հետևանքով որը բաւարար է սեպուում անատակել նրան անատակ հովուութիւն անելուց, և նա մերժում է ապաշխարհել այդ մեղքից, պաշտօնազրկումը հանրային սաստում կունենայ, և յայտագրութիւնը մի բնականոն կազմակերպւած պաշտամունքի ընթացքին կներկայացւի եկեղեցւոյ ժողովրդին, ըստ Ա. Տիմոթէս 5:20 պատւէրին:

Յօդաժ 7

Այլ խորհրդականներ և Յանձնախմբեր

Բաժին 1. խորհրդականներ և Յանձնախմբեր

Վարչախմբական նիւթերը ամենայարմարութեամբ յառաջադրելու համար, կարելի է Հովիւների Վարչախումբին իրենց անդամներից, գործակալներից, և ընդհանուր եկեղեցուց խորհրդականներ և յանձնախմբեր նշանակել: Այս խորհրդականները և յանձնախմբերը գործելու են իրենց միմիայն Հովիւների Վարչախմբից իւրայատկաբար յանձնարարւած պարտականութիւնների և լիազօրութեան համեմատ: խորհրդականների և յանձնախմբերի ընդհանուր արարքները հետևեալներն են՝

- (ա) Ծառայութեան նկատմամբ նկատի առնւած թելադրութիւնները Հովիւների Վարչախմբին յանձնարարել,
- (բ) Հովիւներին իրենց յատուկ ծառայութիւնների մէջ լայնածաւալ խորհրդակցութիւն մատակարարել:

Բոլոր խորհրդականներն ու յանձնախմբերը գոյութիւն ունենալու են Հովիւների Վարչախմբից յատկանշւած յատուկ ժամանակաշրջանի համար:

Բաժին 2. Նշանակւած Յանձնախմբեր

Հովիւների Վարչախմբի յանձնախմբերը կարելի են նշանակել Հովիւների Վարչախմբի բոլորի մեծամասնութեան վաւերացումով: Յանձնախմբերը կազմւած լինելու են Հովիւների Վարչախմբից երկու կամ աւելի անդամներից որոնք բացայայտ որոշումով յանձնարարւած են Հովիւների Վարչախմբից, ի բացառեալ հետևեալների նկատմամբ՝

- (ա) Որևէ որոշում որ Քալիֆորնիա Նահանգի Անշահաբեր Կրօնական Ընկերութիւնների Օրէնքը նաև Վարչախմբի անդամների հաւանութիւնն է պահանջում (պէտք է վաւերացւի Վարչախմբի բոլորի կողմից):
- (բ) Վարչախմբի կամ որևէ մի յանձնախմբի դատարկ պաշտօնների լցնելը
- (գ) Ծրագիր Կանոնագրի բարեփոխում կամ խափանում, կամ նոր Ծրագիր Կանոնագրի որդեգրութիւնը
- (դ) Վարչախմբի որևէ որոշման բարեփոխումը կամ խափանումը որի պայմանները այնքան էլ բարեփոխելի կամ խափանելի չեն
- (ե) Վարչախմբի կամ նրա անդամներից ուրիշ յանձնախմբեր նշանակել
- (զ) Որևէ իքնասակարկ գործառնութիւն վաւերացնել, օրինակի համար գործառնութիւններ որոնք սահմանուած են Քալիֆորնիայի Անշահաբեր Ընկերութեան Օրէնքի 9234(Ա) բաժնում:

Հովիւների Վարչախումբը որևէ այսպիսի յանձնախմբի գործարկութեան ձևը պատւիրելու լիազօրութիւնն ունի: Այսպիսի պատւիրանքի բացակայութեան, այսպիսի յանձնախումբը իր գործարկութեան ձևը պատւիրելու լիազօրութիւն ունի:

Ի բացառեալ Հովիւների Վարչախմբի կամ այսպիսի մի յանձնախմբի տւեալով, այսպիսի յանձնախմբի կանոնաւոր և յատուկ բոլոր ժողովները կառավարում են այս Յօդուածում Վարչախմբի առնչակից ժողովներով ու արարքներով: Իւրաքանչիւր յանձնախմբի ամէն մի ժողովի ատենագրութիւնները պիտի պահուեն:

Յօդուած 8

Ընկերութեան Պաշտօնեաներ

Բաժին 1. Պաշտօնեաներ

Ընկերութեան Հոգաբարձութիւնը բաղկացած է Հովիւների Վարչախմբից ու բոլոր սարկաւագներից: Ընկերութեան պաշտօնեաներն են՝ մի Ատենապետ, մի փոխ-Ատենապետ, մի Ատենադպիր, և մի Գանձապահ: Եթէ մէկից աւելի ուսուցանող հովիւներ կան, Հովիւների Վարչախումբը կրնտրի մի հովիւին որպէս Ատենապետ ու միւսին որպէս Փոխ-Ատենապետ, (ապա թէ ոչ մի Տնօրէն Հովիւ): Ընկերութեան Հոգաբարձութիւնը իր անդամներից մէկին կրնտրի որպէս Ատենադպիր ու մի ուրիշին որպէս Գանձապահ: Հովիւների Վարչախմբի դատողութեան համեմատ, Ընկերութիւնը կարելի է նաև ուրիշ պաշտօնեաներ էլ ունենայ որոնք կարելի են նշանակել այս Յօդուածի Բաժին 3ի տւեալների համաձայն:

Բաժին 2. Ընտրություն

Ընկերության շորս պաշտոնեաները, ի բացառեալ այն պաշտոնեաները որոնք կարելի են նշանակել այս Յօդուածի Բաժին 3 կամ 5 ի տեսլների համաձայն, ամէն երկու տարին մէկ անգամ կընտրեն Ընկերության Հոգաբարձութեան կողմից: Իւրաքանչիւր պաշտոնեայ իր պաշտոնը վարելու է երկու տարւայ տևողութեամբ, կամ մինչև որ նա հրաժարւի, կամ պաշտոնազրկւի, կամ ծառայելուց որևէ ուրիշ կերպով անատակւի, կամ մինչև իր յաջորդողը Ընկերութեան Հոգաբարձութեան կողմից նշանակւի:

Բաժին 3. Ստորակարգ Պաշտոնեաներ

Հովիւների Վարչութիւնը կարելի է նշանակի, կամ լիազօրի Ատենապետին նշանակել, այսպիսի ուրիշ պաշտոնեաներ, Ընկերութեան գործընթացի պահանջքի համեմատ, որոնցից իւրաքանչիւրը իր պաշտոնը վարելու է այդպիսի ընթացքի տևողութեամբ, այդպիսի հեղինակութեամբ, և իր պարտականութիւնները կատարելու է այս Ծրագիր Կանոնագրի տեսլների կամ Հովիւների Վարչախմբի որոշման համեմատ:

Բաժին 4. Պաշտոնազրկում և Հրաժարում

Որևէ պաշտոնեայ կարելի է անատակութեան պարագային այս Ծրագիր Կանոնագրի Յօդուած 6, Բաժին 10ի և 23ի համեմատ պաշտոնազրկւի: Քալիֆօրնիայի Անշահաբեր Կրօնական Ընկերութեան Օրէնքի Բաժին 9213(Ն)ի տեսլների համաձայն, որևէ պաշտոնեայ կարելի է որևէ ժամանակ, առանց որևէ նախապաշարման հանդէպ Ընկերութեան իրաւունքների կամ Ընկերութեան հետ ունեցած որևէ համաձայնագրութեան որին պաշտոնեան մասնակից է, Հովիւների Վարչախմբին կամ Ընկերութեան Ատենապետին, կամ Ատենադպրին գրաւոր յայտագրութիւն տալով հրաժարւի:

Որևէ այսպիսի հրաժարում իզօրու է այսպիսի յայտագրութիւն ստանալու թւականից կամ յատուկ նշած թւականից սկսեալ, և ի բացառեալ իւրայատկապէս այնտեղ նշածին, այսպիսի հրաժարման ընդունելութիւնը հարկաւոր չի իզօրու դարձնելու դրան:

Բաժին 5. Պաշտօնի Դատարկութիւններ

Մի պաշտօնի դատարկութիւնորը յառաջացել է մահւայ, կամ պաշտօնազրկման, կամ անատակութեան, կամ որևէ ուրիշ պատճառով, լցւելու է այսպիսի պաշտօնի բնականոն նշանակման համար այս Ծրագիր Կանոնագրի պատւիրած ձևով, տեսալ թէ այսպիսի դատարկութիւնները լցւելու են երբ դրանց տեղի ունեցած պարագային ու ոչ թէ տարեկան հիման վրայ:

Բաժին 6. Գործելու Անկարողութիւն

Ընկերութեան որևէ պաշտօնեայի կամ որևէ նրան արտօնուած տեղակալ անհատի բացակայութեան կամ գործելու անկարողութեան պարագային, կարելի է Հովիւների Վարչախմբին ժամանակ առ ժամանակ այսպիսի անձնաւորութեան պարտականութիւնները ուրիշ պաշտօնեայի կամ իրենց ընտրած ուրիշ անհատի յանձնարարել:

Բաժին 7. Ատենապետ

Ատենապետը Ընկերութեան Գերագոյն Գործակալ Պաշտօնեան է և հպատակ է Հովիւների Վարչախմբի ղեկավարութեան, նա Ընկերութեան գործունէութիւններին և պաշտօնեաներին ընդհանուր վերակացուն, ուղղատուն, և ղեկավարն է: Նա ատենապետում է բոլոր Հովիւների Վարչախմբի ժողովները որոնք ընթանալու են հոգևոր սկզբունքների համաձայն ինչպէս նշուած Փիլիպպեցիս 2:2-8 ի մէջ: Նա բոլոր կանգնուած յանձնախմբերի պաշտօնական անդամն է, և Հովիւների Վարչախմբից կամ Ծրագիր Կանոնագրից պատւիրուած լիազօրութիւններ ու պարտականութիւններ ունի:

Բաժին 8. Փոխ-Ատենապետ

Ատենապետի բացակայութեան կամ անկարողութեան պարագային, Փոխ-Ատենապետը Ատենապետի բոլոր պարտականութիւնները կը կատարի, և այս կատարելիս նա Ատենապետին տրուած բոլոր լիազօրութիւնները և նրա վրայ դրուած բոլոր սահմանափակումները կունենայ: Փոխ-Ատենապետը ժամանակ առ ժամանակ ըստ Հովիւների Վարչախմբի կամ Ծրագիր Կանոնագրի պատւիրածներին կարելի է այսպիսի ուրիշ լիազօրութիւններ ունենայ և այսպիսի տարբեր պարտականութիւններ կատարի:

Բաժին 9. Ատենադպիր

Ատենադպիրը Հովիւների Վարչախմբի պատւէրի համաձայն գլխաւոր գրասենեակի մէջ կամ մի այսպիսի վայրում բոլոր անդամների, Վարչախմբի և յանձնախմբերի ատենագրութեան մի տետրակ կը պահի, կամ պահել կտայ, որը նշելու է Վարչախմբի ժողովների թւականը, վայրը, թէ արդեօք ժողովը բնականոն կամ յատուկ էր, և եթէ յատուկ՝ թէ ինչպէս էր արտօնուել, դրա վերաբերեալ տրուած յայտարարութիւնը, ժողովին ներկայ գտնուողների, Վարչախմբի և յանձնախմբի ու հոգաբարձութեան անունները ու այն ժողովում անցուղարձները: Այս Ծրագիր Կանոնագրի կամ Վարչախմբի որևէ որոշմամբ երբ պահանջուած է Հոգաբարձութեան ժողովների մասին յայտարարութիւն կատարել, նա կ'յայտարարի կամ յայտարարել կտայ:

Ատենադպիրը Քալիֆորնիա Նահանգում գտնուող գլխաւոր գրասենեակում, կամ ըստ Հովիւների Վարչախմբի պատւէրին մի ուրիշ վայրում, Ընկերութեան Հիմնարկութեան Յօդուածներից և Ծրագիր Կանոնագրից, իրենց վերջին բարեփոխութեամբ, մի օրինակը կը պահի կամ պահել կտայ: Նա բոլոր կնիք պահանջելու արտօնուած գրութիւնների համար կնիքի պահակն է: Նա Եկեցույ անդամացանկն է պահում և առ ընդհանուր Ատենադպրութեան պաշտօնի վերաբերեալ

պարտականութիւններ է կատարում, նաև ժամանակ առ ժամանակ ըստ Հովիւների Վարչախմբի պատիրանքին այսպիսի յաւելեալ պարտականութիւններ է ստանձնում:

Բաժին 10. Գանձապահ

Գանձապահը Ընկերութեան նիւթական և դրամական աղբիւրների տնօրինութիւնն է երաշխաւորում: (Բ. Կորնթացիս 8:20-21): Նա "Բարի վկայած, Հոգով և Իմաստութիւնով լցւած" մարդիկ է ընտրում (Գործք Առաքելոց 6:3), որ այս պատասխանատուութիւնը գործադրեն և կատարեն: Գանձապահը Ընկերութեան ստացւածքի և առևտրական ուղիղ և բաւարար հաշիւները պիտի պահի կամ պահել տայ: Հաշատետրակները ամէն պատշաճ ժամանակ բաց է որևէ հովիւ քննարկութեան համար:

Գանձապահը ստացականների և վճարումների լրիւ և ճշտգրիտ հաշիւը եկեղեցւոյ հաշատետրակների մէջ պիտի պահի, և, բոլոր դրամները և ըստ Հովիւների Վարչախմբի նշանակման եկեղեցւոյ անունով եղած ու եկեղեցուն պատկանած ուրիշ արժէքաւոր գոյքերը դրամատան մէջ ներածելու է, բայց ինքը անձամբ Վարչախմբի պատւէրի համաձայն դրամատան մէջ ներմուծւած դրամագլխի կամ ապահովաթղթի համար պարտական չի լինել: Նա ըստ Վարչախմբի պատւէրին եկեղեցւոյ հաշիւից վճարումներ կը կատարի, և Վարչախմբի բնականոն ժողովի ընթացքին ու երբ նրանք պահանջեն, իր գանձապահական կատարած բոլոր գործառնութիւնների հաշւեցոյցը և եկեղեցւոյ նիւթական վիճակը պիտի ներկայացնի: Նա առ ընդհանուր գանձապահութեան պաշտօնի վերաբերեալ պարտականութիւններ է կատարում, և ըստ Հովիւների Վարչախմբի պատիրանքին այսպիսի յաւելեալ պարտականութիւններ է ստանձնում: Գանձապահը դրամական հաղորդագրեր է պատրաստում կամ պատրաստել տալիս իւրաքանչիւր բնականոն Վարչախմբի ժողովին և տարեկան անդամական ժողովին ներկայացնելու համար:

Յօդւած 9

Ձեռնադրութիւն, Արտօնագրութիւն և Պաշտօնակոչութիւն

Բաժին 1. Ձեռնադրութիւն

Ձեռնադրութիւնը ակնարկում է մի մարդու հոգևոր ծառայութեան կոչին, նրա հովակական պատրաստութեան, և ծառայելու ատակութեան նկատմամբ Հովիւների Վարչախմբի միաձայն ճանաչման: Մի հովիւի վրայ ձեռնադրութիւնը ընծայում է ցկեանս տեղութեամբ, մինչև այն ժամանակ որ նա այդ պաշտօնի ատակութիւնն է յայտնաբերում:

Բաժին 2. Արտօնագրութիւն

Արտօնագրութիւնը հրատարակում է Հովիւների Վարչախմբի կողմից և տրւում է մի մարդու հոգևոր ծառայութեան ճանաչման համար: Դրա նպատակը թուլատրութիւնն է որ մի մարդ եկեղեցկական պարտականութիւններ և եկեղեցւոյ գործունէութիւններ կատարի: Արտօնագրութիւնները կը քննարկեն և հրատարակեն կամ վերաքննարկեն ամէն տարի

Հովիւների դատողութեան համեմատ: Արտօնագրերը հրատարակելու են միմիայն Հայ Վերակազմ Աստուածաշնչի Եկեղեցւոյ անդամներին:

Բաժին 3. Պաշտօնակոչութիւն

Երբոր հոգևոր ծառայութեան համար վաւերագրութիւն է պահանջուում և ուր ձեռնադրութիւնը անհարկ կամ անպատշաճ է, մի անհատ Հովիւների Վարչախմբի կողմից ծառայելու համար պաշտօնակոչուում է:

Յօդւած 10

Խորհուրդներ

Բաժին 1. Ընդհանուր

Մենք հաւատում ենք թէ կան երկու խորհուրդներ որ Քրիստոնեաներ յորդորւած են պահելու՝ Մկրտութիւն և Տիրունական Ընթրիք: Մկրտութիւնը փրկութեան ազդեցութիւն չունի, բայց մէկի հաւատալուց և փրկելուց յետոյ, Մկրտութիւնը յաջորդ քայլն է նրան աշխարհին յայտաբերելու թէ նա հիմա միաճանաչուում է Քրիստոսի հետ, որը մեռաւ, թաղեց, և յարութիւն առաւ:

Մկրտութիւնը մէկ անգամ է կատարուում և ճանաչման մի նշան ու կեանքի նորոգութեան մի վկայութիւն է: Տիրունական Ընթրիքը յիշատակային է և յաճախ է կատարուելու որպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարմնի կոտորման ու արեան հեղման մի յիշատակ:

Բաժին 2. Տիրոջ Սեղանը (Հաղորդութիւն)

Նրանք են ատակ Տիրոջ Սեղանին մասնակցել որոնք հաւատացեալներ են, մկրտուած են և որոնք սերտ Քրիստոնէական կեանք են ապացուցանում: Մինչ ոչ մի չմկրտուած անհատ կարող է կանոնաւորապէս հաղորդուել, Հովիւները կարող են թուլատրել մի այցելուի մասնակցել Տիրոջ Սեղանին որը մի պատշաճաբար հիմնադրուած աւետարանական եկեղեցւոյ հաւատարիմ անդամ է:

Բաժին 3. Հաւատացեալի Մկրտութիւն

Հաւատացեալի մկրտութիւնը մխրճումով և Սուրբ Գրքի ուղղութեան համաձայն է: Այս կանոնին հնազանդութիւնը եկեղեցւոյ անդամակցութեան մի նախապայման է (Յօդւած 5 – Բաժին 2): Որևէ անհատ որ ապաշխարհութիւն ու հանդէպ մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատք է դաւանում, և որի կեանքը նրա դաւանանքին հաւատալի է դարձնում, մկրտուել փափաքելու դէպքում, նա Հովիւների Վարչախմբին դիմումնագիր պիտի ներկայացնի: Հովիւների Վարչախումբը կը տեսակցեն դիմողի հետ, որի ունեցած Քրիստոնէական փորձառութիւնը և մկրտութեան խորհրդի իմաստի մասին նրա ունեցած հասկացողութիւնը կը քննարկուի:

Յօդուած 11

Անդամական ժողովներ

Բաժին 1. Ընդհանուր Տեղեկատուութիւն

Անդամական ժողովները բաց են միայն եկեղեցւոյ անդամներին: Բոլոր անդամներ պաշտօնական անդամական ժողովների մէջ իրենց ներկայութիւնը մի պաշտամունքի ժողովի յաճախելու լրջութեան պէս նկատի պիտի առնեն: Տէրը Իր գորութեամբ ներկայ է եկեղեցւոյ միահաւաքներում ուստի բոլոր ժողովները պէտք է ընթանան պաշտամունքի ու միաբանութեան հոգով: Իւրաքանչիւր եկեղեցական ժողով սկսելու և վերջանալու է աղօթքով: Եկեղեցւոյ անդամական ժողովները վերապահուած են, ուստի անդամներ այսպիսի նիւթերի մասին միայն միւս անդամների հետ խօսելու են:

Բաժին 2. Ժողովների Յայտարարութիւն

Բոլոր անդամական ժողովների յայտարարութիւնները պէտք է տրւեն բնականոն պաշտամունքի ընթացքին, այդ ժողովից անմիջապէս երկու յաջորդող Կիրակիներ առաջ: Ստիպուած դէպքում, կարելի է աւելի կարճ տևողութեամբ յայտարարութիւնով՝ իւրաքանչիւր անդամին ժողովի ժամի, վայրի և նպատակի մասին լուր տալով, ժողով գումարել: Մի անգամ "յայտարարուած" է նկատուած երբ հեռաձայնով, կամ ելեկտրոնամակով, կամ ելեկտրոպատգամով, կամ հաղորդակցական ուրիշ մի միջոցով լուր է տրւել նրան: Այն անդամական ժողովները որոնց ընթացքում որևէ քէտարկութեամբ կատարուած գործառնութիւն չկայ, կարելի են ըստ Հովիւների Վարչախմբի դատողութեան գումարել առանց նախապէս յայտարարութեան:

Բաժին 3. Ժողովների Թիւ

Անդամական ժողովները գումարելու են տարեկան և պէտքի համաձայն ըստ Հովիւների Վարչախմբի դատողութեան, անդամներին տեղեկագրեր և ուրիշ պատշաճ գործառնութիւններ ներկայացնելու համար: Պաշտօնակրերի ու ելեկտրոնային վաւերացումը տեղի պիտի ունենայ Տարեկան Անդամական ժողովի ընթացքին:

Բաժին 4. Ժողով Գումարելու Զևր

Բոլոր անդամական ժողովների գումարելը Հովիւների Վարչախմբի իրաւունքն ու պատասխանատուութիւնն է: Հովիւների Վարչախումբը բոլոր անդամական ժողովների մանրամասնութիւնները կը կարգադրի և դրանց յաջող ընթացքի համար բոլոր պատրաստութիւնները կը տեսնի: Եկեղեցւոյ ժողովներին բացի Հովիւների Վարչախմբի միջոցով ոչ մի նիւթ չի ներկայացուել եկեղեցուն :

Բաժին 5. Առևտրական Գործառնութեան Արտօնաթիւ

Առևտրական գործառնութեան նպատակով գումարած որևէ կանոնագրային անդամական ժողովի ներկայ անդամները արտօնաթիւը իզօրու կը նկատուի երբ եկեղեցւոյ անդամակցութեան 2/3ը ներկայ է այն ժողովին: Հակառակ պարագային ժողովը կը յետագւի կամ կարձակուի:

Մեր նպատակը լինելու է աղօթքով Աստուծոյ միտքը հասկանալ որպէսզի եկեղեցւոյ բոլոր խնդիրներում մեր նկատմամբ Գործք Առաքելոց 6 երորդ գլխում յիշած եկեղեցական ժողովի պէս վկայուի, թէ "այս բանը բոլոր ժողովրդին հաճոյ եղաւ": Իսկ այն պարագաներում երբ միաձայնութիւն չի ստացուում, մի որոշման վաւերացումի համար ներկայ եղող անդամների 2/3 մեծամասնութեան վաւերացումը հարկաւոր է: Ուրիշ խնդիրների նկատմամբ ուր Մրագիր Կանոնագիրը տարբեր քւէարկութեան վաւերաթիւ է պահանջում, այդ խնդիրների նկատմամբ, այս 2/3 կոտորակը Մրագիր Կանոնագրի բացայայտ արտայայտած թւով կը փոխարինուի:

Բաժին 6. Քւէարկութեան Պայմանաւրացում

Եկեղեցւոյ որևէ անդամ տասնութ տարեկան և աւելի, կանգուն և բնականոն անդամակցութեամբ, իրաւունք ունի ժողովրդին պատշաճաբար ներկայացուած հարցերում քւէարկի: Անդամները պիտի խօսեն կանգնած: Ոչ-անդամները արտօնուած չեն եկեղեցւոյ որևէ անդամական ժողովներին ներկայ գտնուել, ի բացառեալ Հովիւների Վարչախմբի յատուկ հրաւերով, ու այս պարագային նրանք խօսելու կամ քւէարկելու իրաւունք չունեն և պէտք է բոլոր հարցերում լուռ մնան, միթէ որ հովիւներից հրաւիրեն ու ժողովուրդը համաձայնուի որ նրանք յատուկ նիւթերի մասին խօսեն:

Յօդած 12

Անհամաձայնութեանց Յանգևորում

Բաժին 1. Ընդհանուր

Եկեղեցւոյ անդամների հովիւների և գործակալների միջև հոգևոր ուսուցանութեան կամ գործելակերպի, եկեղեցւոյ դրամական, կամ եկեղեցական նւէրներով գնուած կալւածների նկատմամբ տեղի ունեցած անհամաձայնութիւնները կը յանգևորեն Հովիւների Վարչախմբի կողմից (կամ լոկ Վարչախմբի դատողութեամբ ըստ արժանւոյն նրանցից որոշուած յանձնախմբից): Մի որոշում կը կայացուի աղօթախառն նկատառումով, խոնարհութեան հոգով, իւրաքանչիւր հովիւ միւսին իր անձից լաւ սեպելով, ու Հոգու միաբանութիւնը և խաղաղութեան կապը պահպանելու ձգտումով (Եփեսացիս 4:1-3):

Յօդուած 13

Այլ Նախատեսութիւններ

Բաժին 1. Արձանագրութիւնների և Համաձայնագրութիւնների Վաւերացում

Հովիւների Վարչախումբը, ի բացառեալ տւեալ այս Ծրագիր Կանոնագրով, կարող է հեղինակաւորել որևէ պաշտօնեայի, ներկայացուցիչի կամ ներկայացուցիչների, Ընկերութեան անունով ու ինպատ, որևէ համաձայնագրական գործակալութեան մէջ մտնել: Այսպիսի հեղինակաւորութիւնը կարող է լինել ընդհանուր կամ յատուկ պարագաների համար: Մինչև Հովիւների Վարչախմբից այսպիսի հեղինակաւորման, ոչ մի պաշտօնեայ, ներկայացուցիչ, անդամ կամ աշխատաւոր որևէ լիազօրութիւն կամ հեղինակութիւն ունի որևէ համաձայնագրութեան, համաձայնութեան, կամ իր վարկի խոստացման, կամ որևէ ուրիշ նպատակի համար ու որևէ գումարով Ընկերութեան պարտաւորել:

Ենթակայ գործադրելի օրէնքին, այս Ընկերութեան և որևէ ուրիշ անձի միջև որևէ պարտագիր, պարտք, պարտաւորութեան փաստաթուղթ, համաձայնագրութիւն, հաղորդամիջոց, կամ ուրիշ պարտականութեան միջոց, կամ վաւերացում գործադրւած կամ մտած ի զօրու և պարտադրական է երբոր ստորագրւած լինի Ատենապետի կամ Փոխ-Ատենապետի, և Ատենադպրի և Գանձապահի միասնաբար ստորագրութիւններով նոյնիսկ միւս անձի իրական գիտակցութեան բացակայութեան թէ ստորագրող պաշտօնեաները հեղինակաւորում չունէին գործադրել այդ:

Բաժին 2. Բարեփոխումներ

Այս Ծրագիր Կանոնագիրը կարելի է Հովիւների Վարչախմբի կողմից նրանց այս Ծրագիր Կանոնագրի կողմից շնորհւած լիազօրութեանց գործադրութեամբ բարեփոխել և ժամանակ առ ժամանակ ու որևէ ժամանակ յաւելեալ Կանոնագրեր պատրաստեն:

Բաժին 3. Բարեփոխումների Արձանագրութիւն

Երբոր մի նոր Ծրագիր Կանոնագիր կամ մի բարեփոխութիւն է որդեգրուում, դա պէտք է նախնական Ծրագիր Կանոնագրին կցւած ատենագրութեան տետրակի մի պատշաճ տեղում արտագրւի: Եթէ որևէ Կանոնագիր խափանում է, խափանւան իրողութիւնը ու ժողովի թւականը որի ընթացքին խափանումը վճռել կամ գրաւորապէս վաւերացւել է պէտք է նշւի վերոյիշեալ տետրակի մէջ:

Յօդուած 14

Ստացումներ, Ներդրումներ, Դրամական Տրամաբաշխութիւն

Բաժին 1. Ստացումներ

Ընկերութիւնը բոլոր դրամները կամ ուրիշ իրեն փոխադրւած կալւածները ստանալու է այն նպատակների համար որոնց համար Ընկերութիւնը հիմնադրւել է (ըստ Հիմնագրութեան

Յօդվածների ցուցաբերման): Իսկ ոչ մի բան ներառնա՞ծ այստեղ պիտի պարտադրի Հովիների Վարչախմբին ընդունելու, կամ որևէ դրամ կամ որևէ տեսակի կալած ստանալու, եթէ դա իրենց դատողութեամբ նկատի թէ ըստ վերոյիշեալ Յօդվածներին հակառակ է Հնկերութեան արտայայտած նպատակներին:

Բաժին 2. Ներդրումներ և Տրամաբաշխութիւն

Հնկերութիւնը կպահի, կտնօրինի, և կտրամաբաշխի իր որևէ դրամագլուխ կամ կալածներ, ստացած այս Հնկերութեան արտայայտած նպատակներին համեմատ կերպով որևէ աղբիւրից:

Յօդված 15

Հնկերութեան Արձանագրութիւններ ու Տեղեկագրութիւններ

Բաժին 1. Արձանագրութիւններ

Հնկերութիւնը իր գործառուծների և կալածների բաւարար և ճշտգրիտ հաշիւները, տետրակները, և արձանագրութիւնները պիտի պահի: Բոլոր այսպիսի տետրակներ, արձանագրութիւններ և հաշւատետրներ պէտք է պահեն Քալիֆորնիա Նահանգում գտնուող մի գործառնութեան կենդրոնական վայրում, ըստ Հովիների Վարչախմբի ժամանակ առ ժամանակ կարգադրութեան:

Բաժին 2. Տետրակների և Արձանագրութիւնների Քննարկութիւն

Իւրաքանչիւր հովի բացարձակ իրաւունք ունի որևէ պատշաճ ժամանակին քննարկելու այս Հնկերութեան ու դրա որևէ օժանդակ կազմակերպութիւնների բոլոր տեսակի տետրակները, արձանագրութիւնները, իւրաքանչիւր տեսակի գրութիւնները և ֆիզիքական կալածները:

Բաժին 3. Հնկերութեան Ելեմտային Տարին

Հնկերութեան ելեմտային տարին կսկսի իւրաքանչիւր տարի՝ Յունւարի առաջին օրից ու կվերջանայ Դեկտեմբերի վերջին օրւայ վերջաւորութեան:

Յօդված 16

Լուծում

Այս Հնկերութեան լուծման պարագային, պէտք է Հովիների Վարչախումբը միաձայն քւէարկութեամբ պէտք է պատճառի այսույիշեալ ունեցւածքները տրամաբաշխեն մի ուրիշ Հնկերութեան որի նպատակները նման են այս Ծրագիր Կանոնագրի Յօդված 2 ի և Հիմնադրութեան Յօդվածների Յօդված 2 ի մէջ յայտնաճանաչւած նպատակներին:

Յօդուած 17

Բարեփոխութիւններ

Այս Ծրագիրը Կանոնագրի բարեփոխութիւնները կարելի են որդեգրուել Հովիւների Վարչախմբի միաձայն քէարկութեամբ Հովիւների Վարչախմբի որևէ բնականոն կամ այս նպատակով գումարուած յատուկ ժողովի ընթացքին: